

1975

ՀԱՅԻՎ ԳՐԱԳԵՏ

ԳՐ

891.99  
7-19

ՀԱՅԻՎ

ՅԵՐԵՎԱՆ • 1936 ՄԱՍԿԻՍ



28.05.2015

26943



4604  
39





Յու. Դաւթե

\* \* \*

Անցնում էյի յես լեռներով,  
մենակ էյի, առանձին,  
ձանապարհին իմ գրպանից  
մի գլանակ հանեցի,  
Մոտս սակայն կրակ չկար,  
չըվա՞ր չուրջս նայեցի,  
Ու բռնեցի գլանակը  
իմ յերգերի բոցի դեմ,  
Յե՛վ յերգերիս կրակներով  
Գլանակս վառեցի...

ԻՄ ՌՈՒԲԱՅԱԹԸ

\* \* \*

**Ս**մնն մեկը ուրույն մի աշխարհ,  
Ապրում ու տեղում եք զարեւ,  
Չեք ծեռքն եմ սեղմում հանճարեզ  
Թումանյան, Խայամ ու Չարենց:

\* \* \*

**Մ**անկութունս չանցավ կապույտ  
թևերի տակ աղավնու,  
Վոչ ել անցավ նա մարմարյա  
ավազանի յեզերքին.  
Աչքս բացի, գլխիս վրա  
մի բազե յեր սավառնում,  
Որորոցս որորում եր  
մի անծանոթ, անհայտ կին...

\* \* \*

**Մ**այր իմ, ով ես յեղել դու,  
քեզ եմ կանչում, անուշ մայր,  
Քնքշութուններ ու բարձեր,  
սփոփանքներ թովչական,  
Ո՞վ խորտակեց արդյոք ձեզ  
այս աշխարհում ինձ համար,  
Ո՞վ կործանեց քեզ, վուսկյ՜ւ.  
Երեզերք իմ մայրական:

\* \* \*

**Ի**նձ արթնացրին թնդանութով,  
որորոցից իմ անգույն,  
Ինչ լավ էր, դեռ, մանկությունից  
խորտակեցին իմ հոգում,  
հորձանեցին մեր խրճիթը  
Մութ անտառի յեղերըում,  
Հիմա տվեր այդ խրճիթն ու  
մանկությունս եմ յետ յերդում:

\* \* \*

**Ո**ւր տվազ կար, ուր արև կար,  
ուր մի դաշտ կար ընդարձակ,  
Ուր ձիերի փոթորկալի  
յերամակներն ընթացան,  
Չիղաղաճում, ախ, այդ դաշտում,  
վոր կռչվում էր Պոլիգոն,  
Ծորը ամպի պես պատանաթյանս  
առաջատները անցան...

\* \* \*

**Մ**անկատունը դարձավ, ավանդ,  
մեզ համար մի ջավարան,  
Այնտեղ չկար վոչ մի սեղան,  
վոչ մի կարգին նստարան.  
հանգնում էինք վոտքի վրա,—  
այնտեղ կար մի խաղարան,—  
Ինչ վոր լավ էր մեր մեջ, ավանդ,  
կորձանեցին ու տարան...

\* \* \*

**Մ**եր մանկատան կառավարին,  
դու դժողքի դունապան,  
Արցունքները, վոր թափեցինք,  
մարգարիտներ են թափած.  
Վոչ վոր չի սա մեզ այն նորից  
նա անդամբ է, նա անդամբ,  
Մենք դուրս յեկանք մանկատնից  
կրծքավեր ու կրծքաբաց...

\* \* \*

Ընկա մենակ մեր մանկատան  
ցանկապատին ու լացի,  
Վեր նայեցի ամպերին յես,  
ցանկապատին քնեցի,  
Կողերիս տակ, աչքերիս դեմ  
ամպերն յեկան, գնացին,  
— Ցանկապատից ինձ դժուր տարեք,  
ամպեր, ամպեր,—ասացի...

\* \* \*

Յերբ կեփակեք մանկատունը,  
մանկատունը մեր վերջին,  
Բերեք նրա փականքները  
և բանալին առջին,  
Յե՛վ ինձ հանձնեք այն զանգակը,  
վոր մեզ համար հնչեցրին,  
Յե՛վ մեզ գունատ մեր շարքերով  
մանկատներ կանչեցին...

\* \* \*

Սողջիկ էյեր, դու լուսեղեն,  
և անունդ եր Մարգարիտ,  
Արևի պես դու բարձրացար  
իմ յերգերի կատարին,  
Անցել ես դու, բայց անունդ,  
ցնորքնիրիս անհարիւր,  
Իեւ Յուսւմ ե իմ հուշերի,  
իմ յերգերի մարմարին:

\* \* \*

Չեոնարկ դարձար դու իմ սիրուս,  
դարձար սիրո յերգարան,  
Յերազնիրիս վոսկյա դու գիրք,  
ցնորքնիրիս բառարան,  
Բամիները, քամիները,  
քամիները քեզ տարան,  
Հրաժեշտ քեզ, անցած սիրուս  
արևելք ու այգաբան:

\* \* \*

**Յ**ես քեզ տեսա իմ գնացած  
 պատանու թյան որերում,  
 Շրջում եյիր դու մեն մենակ  
 սրտիս լուսե խորերում,  
 Վերջին անգամ յես քեզ տեսա  
 հարսանիքիդ շորերում,  
 Մի բան եյիր կարծես փնտում  
 Մաղկաձորի ձորերում...

\* \* \*

**Հ**սկիր հիմա, և թող անցնեն  
 որեր, որեր ու տարիք,  
 Կյանքի հուրը սրտիս միջից  
 չի սպառվի, չի մարի:  
 Կերտում եմ յես իմ յերգերը  
 դրանիտից, մարմարից,  
 Մնաս բարձր, հին յերգերիս  
 աղամանդ ու մարգարիտ:

\* \* \*

**Ո**վ կարող ե չափել սերը  
 սիրով արբած պատանու,  
 Ամեն վայրկյան նրա սերը  
 հորդանում ե, շատանում:  
 Ա՛խ, նա ինքն ել, ինքն ել հաճախ  
 չի իմանում թե ինչ՞նչ  
 Իր սիրուհուն անվերջ, անվերջ  
 պալատներ և խոտանում:

\* \* \*

**Յ**ես խոտացա քեզ պալատներ,  
 ապարանքներ մարմարյա,  
 Արեգակից արեգակներ  
 մե թռիչքով քեզ տարա:  
 Մենք շրջեցինք աստղերի մեջ,  
 լուսնի վրա, իսկ թռանք,  
 Բայց լսի միայն, յերկրի վրա,  
 հողի վրա շունչ առանք...

1609

2 8 0 9



\* \* \*

**Մ**ի անըջիր լուսնի մառին,  
 ով արբեցած սիրահար,  
 Վնչ լուսաստղը յերազիր դու,  
 վնչ ել աստղ ու աստղաբար,  
 Սիրահարնե՛ր, սիրահարնե՛ր,  
 սիրահարնե՛ր լուսնահար,  
 Լուսնի վրա նույն ե նորից,  
 ... Ինչ յեղե՛լ ե, ինչ վոր կար...

\* \* \*

**Չ**կա՞ վոչինչ մեր այս մարմար  
 մոլորակից ել անգին,  
 Ա՛խ, այս հողն ե, վոր անդադար  
 զորացնում ե մեր հողին.  
 Ձգաում ենք մենք դեպի յեթեր,  
 ծառս ենք լինում յերկնքին,  
 Բայց իվերջ հողի գիբին ենք  
 վերադառնում մենք կրկին...

\* \* \*

**Ո**ւնեցա յեռ ուսուցիչներ,  
 դաստիարակներ նոր ե հին,  
 Վումանք յեղան մեղմ ու բարի,  
 վումանք խիստ ու չարածին.  
 Քանի վարին, կառավարին,  
 հերթով յեկան, գնացին,  
 Ինձ ի՞նչ մնաց, ով անցածներ,  
 ձեր ձիրքից ու ձեր գանձից...

\* \* \*

**Ս**մեն մեկը, ով վոր յեկավ  
 մի խոսք ատեց, հեռացավ,  
 Սմեն մեկը մի հետք թողեց,  
 թողեց մի վիշտ ու մի ցավ.  
 Ամեն մեկը իրա հանգույն  
 քեզ ըմբռնեց, հասկացավ,  
 Մեկը սիրե՛ց, մեկը ներե՛ց,  
 մյուսն ատե՛ց ու անցավ...

\* \* \*

**Ճ**ամբորդի պես յեղար անքուն,  
լուսաստղը դու սիրեցիր,  
ճամբորդի պես վորտեղ մթնեց,  
այնտեղ ընկար, քնեցիր,  
Ինչ գրեցիր մինչև հիմա,  
ինչ վոր արդեն ցրեցիր,  
Բոլորը դու վտաքի վրա,  
կամ ծնկաչոր գրեցիր:

\* \* \*

**Վ**ոչ դուռ կար ինձ, և վոչ տանիք,  
վոչ առաստանդ, վոչ հատանկ,  
Դու յես յեղել իմ սենյակը,  
իմ խրճիթը բաց ու փակ,  
Ով լայնահուն դու բնություն,  
և դու, անմեռ արեգակ,  
Ահա ինչն առողավ սիրով  
ձեզ եմ փարում շարունակ:

\* \* \*

**Ս**րեգալը Թանաքաման,  
և լուսինը մի սեղան,  
Ա՛խ, մարմարյա դու իմ սեղան,  
դու ինձ ընկիր միշտ յեղար,  
Փղոսկրից ել դու սպիտակ,  
մխ, դու մարմար դեռ չեզած,  
Ո՞վ հղկեց քեզ այդպես վողորկ,  
այդ վարպետը ի՞նչ յեղավ...

\* \* \*

**Ի**մ ներքնակը լցրել եմ յես  
աստղերով ու ասողերով,  
Յե՛վ լուսինը, վորպես մի բարձ,  
դրել եմ յես զլիսիտ տակ,  
Թեթև մի ամպ, վորպես վերմակ,  
փռել եմ յես ինձ վրա,  
Յե՛վ քնել եմ, և յերազել,  
քե՛զ, ով շքեղ արեգակ:

\* \* \*

**Հ**այր իմ, հայր իմ, ինչո՞ւ տարաբ  
ինձ անտառներն անհատակ,  
Բնությունը դարձրի՞ր ինձ մայր,  
և առաստաղ, և հատակ,  
Չոր յես այսպես լինեմ անբուն,  
չհանդուրժեմ վոչ մի փակ,  
Հայր իմ, հայր իմ, ինչո՞ւ գրե՞ր  
դու լուսաստղը գլխիս տակ։

\* \* \*

**Զ**եմ մոտեցրել շուրթերս յես,  
վոչ մի կավյա դավաթի,  
Հախճապակյա վոչ մի թասի,  
կամ թիթեղյա անոթի,  
Ձուր եմ առել իմ ձեռքերով  
աղբյուրներից ինձ մոտիկ,  
Ախ՛, ձեռքերս, ախ՛, շուրթերս  
նոր եմ տալիս յերկաթին։

\* \* \*

**Մ**նվեցի Յեփրատի ափին,  
որորոց դարձավ ինձ Ջանգուն,  
Մոսկվա գետի հոտանքին  
յես կանգնած նայում եմ անբուն.  
Ինձ վրա ամեն որ կարմիր  
մոսկովյան արևն է ծագում,  
Յե՛վ այսպես ամեն ինչ գալիս,  
անդադար փոխվում է կյանքում։

\* \* \*

**Յ**երևան, քեզ չեմ մոռանա,  
զըրնգուն քաղաք իմ Ջանգու,  
Մասի դիմաց հավիտյան  
դու կանգնած կմնաս կանգուն,  
Յես կանցնեմ, արևի քաղաք,  
յես փոշի կղաճճամ կյանքում,  
Ու հավե՛տ, հավե՛տ կզնան  
այս գետը, Յեփրատն ու Ջանգուն։

\* \* \*

**Դ**ու չապրեցիր Հոռոմում,  
դու յեղար լոկ Հոռոմում.  
Դու Հուսաղբյուր գնացիր  
վորպես խնդուն պատանի,  
Բո ճակատը վողողեց  
Արագածի ջինջ քամին,  
Բո յերգերը ծայր առան  
հանդում, արտում ու գոմում:

\* \* \*

**Ս**չքերը վոսկյա խուփեր են,  
մեր հոգու վրա դրված,  
Մի բան է յեփվում ներսում,  
կրակ կա խորքում վառված.  
Ո՛ր, յեփվող այդ ջուրն է միշտ,  
վոր, վորպես արցունք հաճախ,  
Յեռալով դուրս է ցայտում,  
բարձրանում, թափվում է ցած:

\* \* \*

**Վ**անդ առեք, դժնի արցունքներ,  
արցունքներ այնքան մաերիմ,  
Միք իջնի շիկնած այտերիս,  
միք թափվի այրվող ձեռքերիս.  
Ցնծադին այս հուրն է կյանքի,  
վոր խորքեց որորում է ինձ,  
Թափվեցե՛ք, ուրախ արցունքներ,  
արցունքնե՛ր, ուրախ աչքերեց...

\* \* \*

**Վ**րակն այս, վոր յես անդադար  
հանում եմ սրտիս հնոցեց,  
Ձեռքերս անտատան պահած  
իմ սրտի շողշողուն բոցին,  
Ո, չէ այն, ընկեր իմ, այն չէ,  
նա արդեն մոխրած է մի քեն  
Յե՛վ վճր կրակն է նույնը,  
յերբ նրան պոկում ես բոցեց՝

\* \* \*

**Ո՛**, կամաց վորոտա կրակ,  
բոցերդ սրտիս փաթաթած,  
Դու արդեն դուրս ես ցայտում  
աչքերիս միջից սրնթաց.  
Ո՛, հանդիսս որորվեք, բոցեր,  
ո՛, հրդեհ, հրդեհ խառնակ,  
Մի՛ խուժիր, վոր քո շնչից  
տողերս մոխիր չդառնան...

\* \* \*

**Ո՛**, հողմիր, հողմիր դու, Հյուսիս,  
ո, հողմիր վոսիլ բարեկամ,  
Հարավից այրված վոտքերով,  
յես այրված ձեռքերով յեկա.  
Յես մի բոց նետված Հյուսիսում,  
գնում եմ գալիքից գալիք,  
Գլուխս յերգերիս բոցին,  
հողմերիդ հորձանքին թեքած:

\* \* \*

**Ո՛**, շոգից, տենդից եմ այրվում,  
այրվում եմ, Հյուսիս, այտերս,  
Դողում եմ հրից անարեկ,  
դ՛ն, գուցե, փրկություն բերես.  
Յերեսդ խփես յերեսիս,  
փայփայես, գզվես ու սիրես,  
Մատներս եմ այրվում, Հյուսիս,  
մատներս, մատներս, մատներս...

\* \* \*

**Ի՛**նչպես Բյորնզը սիրեց մի որ  
Լեոնաշխարհն իր հայրենի,  
Ինչպես Հեմանսը՝ Ֆելիշան,  
Ուորդսուորդն ու Սաութին,  
Այդ կարոտից ավելի վառ,  
բարձրագոչ ու անարատ,  
Ձեզ սիրեցի յես աշխարհում,  
Արագած ու Արարատ:

\* \* \*

**Ո՛ր**, Աբարատ, դու մշտագո  
հավերժութեան արացույց,  
Դու կողմացույց արեելքի,  
դու դաշտերի ուղեցույց,  
Գանի՛ ճամբորդ ու քարավան,  
լեզուներ ու այրուձի,  
Փեղերիդ տակ հանդուտացան,  
բարձրացան ու գնացին...

\* \* \*

**Ո՛ր**, Աբազած, քառազազած,  
լուսեղեն ու վայրենի,  
Դու ձյունների ու ամսերի,  
ու աստղերի հայրենիք,  
Մի կարոտ և սիրտս այրում,  
ձյունիսում այս հեռավոր,  
Մի հրաշեկ, անծայր կարոտ,  
հողմային ու ահավոր:

\* \* \*

**Ո՛ւր** ել քայլեմ, ուր ել գնամ  
իմ արևն և հսկում յերգիս,  
Աբարատի սովերները  
գրոշի պես ընկած գրքիս,  
Աբազածի գազաթները  
աչքերիս մեջ հավետ կանգուն,  
Մեր գեղիլուռը գեմքիս վրա,  
և մեր զինու թասը ձեռքիս:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԴԻՄՈՒՄ ՀՅՈՒՍԻՍԻՆ

**Յ**երբ յես քայլում եմ, աչքերիս դեմից,  
Վտոքերիս տակից թափով սրբնթաց,  
Զանգուն ե հոսում. փչում ե դեմքիս,  
Յերկրիս լեռների շունչը ձյունածածկ:

*Ո՛, յես ծնվել եմ այրող հարավում,  
Ուր, վոր Մեվանն ե աստղերին փարված,  
Յեվ Զանգուն, վորպես կապույտ ժապավեն,  
Նրա լուսավոր թիկունքից կախված:*

*Ուր, վոր ամպերը անցնում են կնքված  
Ջինջ Արագածի վոսկե թագերով,  
Յեվ Արարատի ստվերն ե ընկնում  
Մեր քաղաքների, գյուղերի վրա...*

*Ուր մըրեկներն են կախվում ամպերից,  
Բոց կայծակներն են լեռները ձևում,  
Մի վայրկյան առաջ ուր վոր հեղեղ ե,  
Մի վայրկյան հետո՝ յերկինքն ե շողում:*

*Յես մեծացել եմ իմ հորդ ջրերում,  
Հովիտների մեջ իմ լեռնաշխարհի,  
Ուր, վոր աստղերն են ձորերը լցվում,  
Ուր դադաթներն են ձուլվում ամպերին:*

Քնել եմ խաղաղ լեռնալանջերում,  
Իմ ջինջ, աստղազարդ յերկնքի ներքո,  
Ուր սիրո նման մեղմ ու յերազկոտ  
Հանդարտ իջնում ե յերկրիս յերեկոն:

Ուր խաղաղության գրկում ընկողմած  
Ներհում են յերկրիս լեռնափեշերը,  
Ուր ամեն ձորում, իր թևերի տակ  
Կարծես քնում ե յերկրիս գիշերն ել...

Լուռ եմ և՛ յերգ, և՛ շշուկ, և՛... ձայն,  
Վերջին ճամբորդն ել մախախն ե հանում,  
Քամին թևաթափ ընկնում ե ճամբին,  
Յեվ ծղրիտներն են դաշտերում քնում...

Ուր, մեղ քայլառքայլ հետապնդում ե  
Համառ արևը ծննդյան որից,  
Ուր, յերբ մեռնում ենք, մեր հողին գարձեն,  
Մեր շիրիմներին արև ե նորից...

Յեվ հիմա, Հյուսիս, կանգնած եմ ահա,  
Այս տարերքներով յերկինքներիդ տակ,  
Յես մի բանաստեղծ աստղազարդ յերկրի,  
Լեզվիս վրա բոց, վոտքերիս՝ կրակ:

Իմ յերկրի նման և սունն եմ, և խիստ,  
Իմ յերկրի նման ջերմ ու դյուրաբորբ,  
Իմ յերկրի նման մեղմ ու անհանգիստ,  
Իմ յերկրի նման հավետ յերազկոտ:

Կանգնել եմ քո հորդ շարափներիդ տակ,  
Ուրիշ հանգրվան չունեմ աշխարհում,  
Ո, յեթե ընկնեմ, ընկնեմ թող այստեղ,  
Հարավի պայծառ աստղերից հեռու...

## ՄԵՆՔ ԱՆՎԵՐՋ ԿԱՆՉՈՒՄ ԵՆՔ ԱՊՐԵԼ

Յերգերն իմ սրտում,  
Ուրախ թե տրտում,  
Ընկնում եմ յերբ վոր ճանապարհ,  
Արտում թե սարում,  
Ծաղկած դաշտերում  
Մի յերգ եմ սուլում անդադար:

«Հասկեր յերկնագույն,  
Այդ լինչ եք յերգում,  
Ինչո՞վ եք արդյոք դուք հարբել.  
— Հովից որորվում,  
Իրար ենք փարվում,  
Մենք անվերջ կանչում ենք՝ ապրել...

«Անգակ ծաղիկներ,  
Ձանգակ ծաղիկներ,  
Ինչո՞վ եք արդյոք դուք հարբել.  
— Մենք ցող ենք թափում,  
Շողում ենք, ծափում,  
Ու անվերջ կանչում ենք՝ ապրել...

«Ամպեր լուսավոր,  
Քնքույշ թևավոր,  
Ինչո՞վ եք արդյոք դուք հարբել.

— Կապույտ յերկնքում  
Մենք յերգ ենք յերգում,  
Մենք անվերջ կանչում ենք՝ ապրե՛լ...

«Սատղեր, դուք դվարթ,  
Լուսին լուսավառ,  
Ինչո՞վ եք արդյոք դուք հարբել,  
Յերկնքին փարված,  
Աշխարհով տարված,  
Մենք անվերջ կանչում ենք՝ ապրե՛լ...

«Արե՛ հրազոր,  
Արե՛ դու բոսոր,  
Ինչո՞վ ես արդյոք դու հարբել,  
— Հավիտյան անքուն  
Մի յերգ եմ յերգում,  
Յես անվերջ կանչում եմ՝ ապրե՛լ...

Հողմեր խելագար,  
Անհանգիստ ու չար,  
Ինչո՞վ եք արդյոք դուք հարբել,  
— Դաշտում թե սարում,  
Հուզմունքից սուլում,  
Մենք անվերջ կանչում ենք՝ ապրե՛լ...

«Ջրեր լուսալիք,  
Սարերից գալիս,  
Ինչո՞վ եք արդյոք դուք հարբել,  
— Ժայռերին խփվում  
դառնում ենք փրփուր,  
Ու անվերջ կանչում ենք՝ ապրե՛լ...

«Լեռներ ձյունապատ,  
Հավիտյան հպարտ,  
Ինչո՞վ եք արդյոք դուք հարբել,

— Ամպերը գրկած,  
Մեջք մեջքի դարկած,  
Մենք անվերջ կանչում ենք՝ ապրե՛լ...

«Արծի՛վ, դու գերի  
Բարձր լեռներին  
Ինչո՞վ ես արդյոք դու հարբել,  
— Թե՛վերս վերից  
Զարկում ամպերին,  
Յես անվերջ կանչում եմ՝ ապրե՛լ...

Ու քայլում եմ յես  
Ամենուր այսպես,  
Յերգով ու սիրով եմ հարբել,  
Ամենքին զգվում,  
Նույն յերգն եմ յերգում,  
— Ապրե՛լ, ապրե՛լ, ապրե՛լ, ապրե՛լ...

## ՈՒՍԱՆՈՂԸ

**Յ**ես դեռ չեմ սերտել կարգին վոչ մի գիրք,  
Դուրս, դուրս եմ վազել միշտ դասարանից,  
Ո՛ր, իմ հանգստի ժամերին անգամ  
Ինձ դուրս ե կանչել կոնսուլտանդ քամին:

Իմ պրոֆեսորը արեգակն յեղավ,  
Իմ դասախոսը՝ հողմը գաղաղած.  
Լաբարատորիա՝ աշխարհն այս անհունս,  
Աուզիտորիա՝ յերկինքն աստղազարդ:

Մանկությունից եմ յես սկսել ուսել,  
Յեվ մինչև հիմա դեռ ուսանում եմ,  
Յերբ ներս ե մտնում պրոֆեսորս  
Ուրախությունից գլխարկս հանում եմ:

Ձեմ սղագրում վոչ մի գեկուցում,  
Չունեմ յես կոնսպեկտ, չունեմ ծրագիր,  
Չունեմ դասագիրք, վոր պետք ե անգամ  
Ամեն մի անփուլթ աշակերտի:

Վոչ մի առարկա դեռ չեմ ավարտել,  
Յեվ դեռ չեմ տվել վոչ մի քննություն,  
Սակայն միշտ դո՛հ են նրանք ինձանից,  
(Յես ել դժգոհ չեմ քեզնից բնություն):

Առանց ընդմիջման, դասամիջոցի,  
Կուրսից կուրս եսպես անցնում եմ ուրախ,  
Յեվ գուցե մի որ, ո՛վ, պրոֆեսոր,  
Չավարտած, ընկնեմ, թեերեզ վրա...

Կուզեյի միայն, վկայագրում,  
Վոր ինձ պիտ տրվեր, ո՛ր, յերբեիցե,  
Գրեք անունս, ազգանունս,  
Յեվ փորագրեք պատկերները ձեր:

Գրեք, վոր յեղավ այսպիսի մի սիրտ,  
Մի կյանք, վոր այնքան մեղմ ու զվարթ եր,  
Մի խենթ ուսանող, վոր ուսեց անդուլ,  
Կուրսից կուրս անցավ, բայց ե չավարտեց...

Գրեք, ո՛ր, վոր նա ծնվեց բացողյա,  
Չունեցավ անգամ որորոց կյանքում,  
Լուսնի տակ մնաց, մնաց կխաբարդ,  
Մոսկվան տվեց նրան տեղ ու տուն:

Բայց նա դնում եր, սերտում անդադրում,  
Առանց ընդմիջման ե արձակուրդի.  
Նա Ուսանող եր, վոր աշխարհ յեկավ  
Իր ձեռքը վրած անհանգիստ սրտին...

## ՊԱՐՍՍՏԱՀԱՐԻ ՅԵՐԳԸ

1

**Զ**պառկեցի որորոցում,  
Ինձ և վնչ մի մայր չորորեց,  
Զքնեցի վոսկե բարձին,  
Զտեսա յես ուրախ որեր:

Հագիւ մի լայն կարմիր շապիկ,  
Դարձա փոքրիկ պարսատահար,  
Հասկերի մեջ վոտաբորիկ  
Շրջում էյի յերկւոր, յերկւոր:

Վոչ գոտի կար մեջքիս կապած,  
Վոչ ել զլիարկ կար իմ զլիսին,  
Յեմ ինչ ե պետք արտից բացի  
Պարսատահար խենթ մի տղի:

Ճնճղուկները խմբով թռան,  
Խումբ-խումբ անցան ու գնացին,  
Յես յերգեցի ու նետեցի  
Պարսաքարերն իմ սլացիկ:

Վորին զիպով, վորից անցավ,  
Յես չիմացա, չհաշվեցի,  
Նետում էյի զիշեր, ցերեկ  
Պարսաքարերն իմ սլացիկ:

40

Յեմ յերբ հոգնում, արտի ծայրին,  
Թմբին ընկած քնում էյի,  
Ճնճղուկները յերագիւ մեջ  
Խումբ-խումբ անցնում, գնում էյին:

2

Բայց գալիս եր աշունը յերբ,  
Տուն էյի տանում յես մեր կալից  
Մի բուռ ցորեն, մի բուռ կորեկ,  
Մի բուռ դարման, մի բուռ գարի:

Փարվում էյի հետո լացով  
Հորս մաշված բաց ծնկներին.  
— Հայրիկ, հայրիկ, միթե կերան  
Ճնճղուկները մեր վողջ գարին:

Զնետեցի, միթե, հայրիկ,  
Պարսաքարեր յես սլացիկ,  
Ասա, ինչո՞ւ մենք հաց չուսնեք  
Առանց հացի մենք մնացինք:

— Վորդիս, գուցե նրանից ե,  
Վոր գու արտում շատ քնեցիր,  
Ճնճղուկները խումբ-խումբ յեկան  
Արտը կերան ու գնացին:

Առա նորից պարսատիկն իմ  
Ու յես նորից արտ գնացի,  
Ճնճղուկները խումբ-խումբ իջան  
Մեր հասկերը որորեցին:

— Հեյ, ճնճղուկներ, թռեք, անցեք,  
Մեզ միք թողնի առանց հացի,  
Ճնճղուկները ամպի նման  
Խումբ-խումբ անցան ու գնացին

41

Վոչ մի վայրկյան չքնեցի,  
Մինչև մութն ու աստղերն ընկան,  
Մինչև մաշվեց պարսատիկն իմ  
Ու հոգնելով յես վայր ընկա:

Վերջին անգամ ձեկցի յես  
Շապիկն իմ հին, շապիկն իմ թաց,  
Շինեցի նոր մի պարսատիկ  
Ու վեր կացա թեթև ու բաց:

Ու վեր կացա որորելով  
Պարսատիկն իմ հասկերից վեր.  
— Հէյ, ճնճողուկներ, հարսոյ, հարսոյ,  
Թո՛ւք, անցեք սիրուն հավեր:

Արտում ասկայն լուսթյուն եր,  
Վոչ մի թռչուն արտում չկար.  
Յես եյի մենակ հարայ տալիս  
Ու թմբից թումբ շրջում յերկար:

3

Մեծացել եմ. վաղճւց, վաղճւց  
Դուրս եմ յեկել մեր հերկերից,  
Յեզ նետում եմ գիշեր ցերեկ  
Պարսաքարերն իմ յերգերի:

Հայրենիքս՝ մի արտ անծայր,  
Յեզ յես նորից պարսատահար,  
Թմբից մի թումբ անցնում եմ յես,  
Ու հերկից հերկ շրջում յերկար:

Ո՛ հայրենիք, արտ իմ պայծառ,  
Դու անսահման ու ալեծճւփ,  
Դեռ յես վորքան շրջեմ պիտի,  
Հերկից մի հերկ ու թմբից թումբ:

Ներիք, ներիք, յեղան պահեր,  
Ընկա թմբիդ ու քնեցի,  
Ճնճողուկները թումբ-թումբ յեկան,  
Արտը կերան ու դնացին:

Ներիք ինձ հայր, ներիք ինձ մայր,  
Ներիք անփուլթ անառակիդ,  
Սմեն մի մայր, ամեն մի հայր  
Ներում ե միշտ իր զավակին:

Շապիկ անգամ հագիս չկար,  
Հայրս ներեց ինձ և դնաց,  
Յես մնացի, և իմ ձեռքում  
Մի պարսատիկ միայն մնաց:

Ուրիշ վոչինչ, վոչինչ չունեմ,  
Այս եմ, վոր կամ, ուրիշ վոչինչ.  
Շուրջս հասկեր՝ և յես նորից  
Այս անսահման արտի միջին:

Ո՛, քանի կամ, անուշ իմ հայր,  
Ել չեմ քնի արտի ծայրին,  
Կերթամ առաջ, ձեռքիս բռնած  
Պարսատիկն իմ յերգերի:

Մինչև գիշեր յես չեմ քնի,  
Թեկուզ աստղերն ու մութն ընկնեն,  
Մինչև վոչ մի յերգ չմնա,  
Մինչև հոգնած արտում ընկնեմ...

## ԱՆՑԱԳԻՐԸ

Հիացմունքից թևերս պարզեցի մի որ,  
Փողոցում ուժգին աղաղակեցի:  
— Ո՞վ ես, ի՞նչ ես անում ուշ գիշերին, ընկեր,  
Խանգարում ես կարգը, քաղաքացի:

— Հետևիր ինձ, գնանք, — ասաց ժամապահը.  
Քաղաքամաս մտանք մենք միասին.  
— Հարգելի պետ, սրան յես փողոցում գտա,  
Աղաղակում եր գիշերվա կեսին:

— Ցույց տուր անցագիրդ, — ինձ մոտեցավ պետը,  
Ո՞վ ես, ի՞նչ ես, ասան, վորտեղմացի:  
— Լուսնի բնակիչ եմ, շշնջացի կամաց,  
Ցեմ աստղերից իջած քաղաքացի:

Որորոցս զբված եր աստղերի վրա,  
Լուսինն եր, գիտեք, մանկաբարձուհիս,  
Արևն եր իմ դայակը, և դաստիարակը,  
Ցեմ լուսաստղն եր չքնաղ իմ սիրուհին:

Շորերս յես կախ եմ տվել միշտ ամպերից.  
Արծիվն եր, գիտեք, իմ փոստատարը,  
Ցեմ կայծակն եր, գիտեք, հեռագիրն իմ, պետ  
Մեծ եր տիեզերքը և աշխարհը:

Բայց յես տխուր եյի. չկար և վոչ մի յերդ,  
Աստղերի վրա ու տիեզերքում.  
Ցեմ յես փնտրում եյի, թե վորտեղ են արդյոք,  
Մարդիկ հիացմունքից, սիրուց յերգում:

Մի որ լսեցի յես, իմ արծիվը ճախրում,  
Ցերգով բարձրանում եր դեպի վերև.  
— Արծիվ, ասացի յես, այդ վորտեղ են յերգում,  
Ցեմ նա ինձ աստղերից Մոսկվա բերեց:

Ցեմ յերբ յես զգացի հողը վտառերիս տակ  
Հիացմունքից բարձր աղաղակեցի,  
Պինդ գրկեցի հողը, գետնատարած ընկա,  
Ցերկրի պայծառ կուրծքը համբուրեցի:

Հետո թափ տվեցի, գլխարկն իմ անհոգ,  
— Մնաք բարով աստղե՛ր, աստղե՛ր ասացի,  
Կայծակով յես հեռագիր տվեցի լուսնին,  
Ցեմ դարձա յերկրին այս քաղաքացի:

Անցագիր եր ուղղում, հավատիկ և նա,  
Ցերգն և անցագիրս, թողեք յերգեմ,  
Ցերգի համար միայն, աշխատանքի համար  
Արծիվն ինձ աստղերից բերեց ներքև:

Դձուքս տարեք սրան, հրամայեց պետը,  
Ցեմ դո՛ները թափով յետ գնացին.  
— Տարե՛ք, թող վորոտա, հիացմունքից յերգի,  
Անցագիր ունի այս քաղաքացին:

## ՆՈՐ ՈՐՈՐՈՑԻ ՅԵՐԳԸ

(Մայրական որոր)

Քնիր բալիկ, քնիր սիրուն,  
Յերգ եմ ասում, շուտ մեծացիր,  
Չմեծացանք մենք մտւորում,  
Մանկապարտեզ չգնացինք:

Յեզ վոչ ել մեզ որորեցին  
Որորոցում բոժոժավոր,  
Քնիր, բալիկ, առանց լացի,  
Քնիր, մանկիկ իմ լուսավոր:

Յերբ ցած իջնես որորոցից  
Քեզ կտաննեմ մանկապարտեզ,  
Հետո դպրոց, իսկ գւլրոցից  
Հով սարերը կտաննեմ քեզ:

Պարույկների շուրջ կխաղաս,  
Ուր կան անթիւլ յերեխաներ,  
Աստղերի տակ կմեծանաս,  
Քնիր, փոքրիկ իմ սլոններ:

Վնչ մի ճամբար չգնացինք,  
Վնչ մի խարույկ մենք չտեսանք,  
Մենք մեծ կուլի, պատերազմի  
Բոցերի տակ մեծացանք:

Ուզում եմ յես, վոր դու դառնաս  
Նախագահ մեր գյուղխորհրդի,  
Քնիր, քնիր, իմ նախագահ,  
Իմ քարտուղար, իմ լավ վորդի:

Դառնաս հերոս յերկրի համար,  
Կոլեկտիվին փառք ու պատիվ,  
Քնիր, հերոս ողակավար,  
Քնիր, իմ լավ բրեզադիր:

Մեր արտերում համայնավար,  
Լինի յերգի, բերքի հանդես,  
Քնիր, բժիշկ ու խրճիթվար,  
Քնիր, իմ լավ գյուղատնտես:

Բայց թե հանկարծ թշնամին սև  
Մոտենա մեր սահմաններին,  
Որորոցդ թափ տամ ասեմ  
— Վերկնց, կարմիր բանակային:

Քնիր բալիկ, քնիր գալիք,  
Չմեծացանք մենք մտւորում,  
Տն'ս, յերգում ու կաթ եմ տալիս,  
Որորում եմ ու համբուրում:

Ինչ լմւլ ե, վոր դու ծնվեցիր  
Այս գեղեցիկ լուսաբացին,  
Քնիր, քնիր, շուտ մեծացիր,  
Յերկրիս պայծառ քաղաքացի:

## ՅԵՐԲ ՓՈՒՔՐԻԿ ԵՅԻ

**Յ**երբ փոքրիկ էյի կարծում էյի թե  
Մեր կալուսն է լոկ յերկինքը լալիս,  
Մեր կալից բացի, ուրիշ զոչ մի տեղ  
Անձրև չի գալիս:

Իսկ յերբ մեծացա, մեր կալը թողած,  
Մեր գյուղը թողած գնացի հեռու,  
Տեսա և անձրև՝ և ձյն է գալիս  
Արար աշխարհում...

## ՄՏՈՐՈՒՄ

**Վ**որքան, վորքան աշխարհը խոր փոփոխվեց իմ կյանքում.  
Յերեկ նստած պատի տակ մեր խրճիթի՝ հողագույն,  
Յերեկ միայն մի ճամբա, մի գորշ գյուղ ու մի յերկինք,  
Այսօր Հյուսիս, Մոսկվա, ճանապարհներ բյուրավոր,  
Յեվ յերկինքներ աստղադարդ, և աշխարհներ հեռավոր:

Ո՛ր, հեքյաթնե՛ր, հեքյաթնե՛ր — խաղաթղթեր մանկական,  
Կախարդական, հիասքանչ, ցնորքի պես դյուլթական,  
Բարձերի պես ջերմ ու տաք, գիշերի պես յերազկոտ,  
Յես բարձրացա ձեզ գրկած սանդուխքներով շարժական,  
Դուք գրկիս մեջ մարեցիք, բազուկներիս մեջ հանգաք...

Իմ մանկուկյան շողշողուն որացույցներ անմարմին,  
Փոխվե՛ց, փոխվե՛ց ամեն ինչ, փոխվեց և գյուղ և յերկինք.  
Անցնում էյի թաղից թաղ, անցնում էյի տնից տուն,  
Գյուղը ծանոթ, թվում եր՝ աշխարհը լոկ մեն մի բակ,  
Տիեզերքը՝ մի խրճիթ՝ և յես նստած պատի տակ:

Չիմա անհոն քաղաքներ, ապարանքներ անծանոթ,  
Յեվ դարպասնե՛ր, դարպասնե՛ր, և փողոցներ վեր տանող.  
Ու թաղից թաղ գնում եմ, մերթ Ենքսպիր և մերթ Պո,  
Յեվ անցնում եմ բակից բակ, տնից տուն ու շեմքից շեմք,  
Յեվ դեռ վորքան պիտ գնամ, մինչև իջնի կես գիշեր...

## ՅԵՐԲ ՓՈՔՐԻԿ ԵՅԻ

**Յ**երբ փոքրիկ էյի կարծում էյի թե  
Մեր կալումն է լոկ յերկինքը լալիս,  
Մեր կալից բացի, ուրիշ վոչ մի տեղ  
Անձրե չի գալիս:

Իսկ յերբ մեծացա, մեր կալը թողած,  
Մեր գյուղը թողած գնացի հեռու,  
Տեսա և անձրե՛, և ձյնն է գալիս  
Արար աշխարհում...

## ՄՏՈՐՈՒՄ

**Վ**որքան, վորքան աշխարհը խոր փոփոխվեց իմ կյանքում.  
Յերեկ նստած պատի տակ մեր խրճիթի՝ հողագունյն,  
Յերեկ միայն մի ճամբա, մի գորշ գյուղ ու մի յերկինք,  
Այսոր Հյուսիս, Մուկվան, ճանապարհներ բյուրավոր,  
Յե՛վ յերկինքներ աստղազարդ, և աշխարհներ հեռավոր:

Ո՛ր, հեքյաթնե՛ր, հեքյաթնե՛ր — խաղաթղթեր մանկական,  
Կախարդական, հիասքանչ, ցնորքի պես գյուլթական,  
Բարձերի պես ջերմ ու տաք, գիշերի պես յերազկոտ,  
Յես բարձրացա ձեզ գրկած սանդուխտներով շարժական,  
Դուք գրկիս մեջ մարեցիք, բազուկներես մեջ հանգաք...

Իմ մանկության շողշողուն որացույցներ անմարմին,  
Փոխվե՛ց, փոխվե՛ց ամեն ինչ, փոխվեց և գյուղ և յերկինք.  
Անցնում էյի թաղից թաղ, անցնում էյի տնից տուն,  
Գյուղը ծանոթ, թվում էր՝ աշխարհը լոկ մեն մի բակ,  
Տիեզերքը՝ մի խրճիթ՝ և յես նստած պատի տակ:

Հիմա անհոնն քաղաքներ, ապարանքներ անձանոթ,  
Յե՛վ դարպասնե՛ր, դարպասնե՛ր, և փողոցներ վեր տանող.  
Ու թաղից թաղ գնում եմ, մերթ Շեքսպիր և մերթ Պո,  
Յե՛վ անցնում եմ բակից բակ, տնից տուն ու շեմքից շեմք,  
Յե՛վ դեռ վորքան պիտ գնամ, մինչև իջնի կես գիշեր...

## ՀԱՐԵՎԱՆԻՍ ԱՂԶԿՍ ՀԵՏ

(ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ)

Հարեանիս աղջկա հետ խաղում եյի փայտե ձի,  
Փայտե ձիուց յերբ ցած իջա պահմտոցիկ խաղացի:

Ամեն անգամ պահ մտնելիս գտնում եյինք մենք իրար,  
Յե՛վ գտնելիս նորից, նորից կանչում եյինք — պահ մտա՛ր:

Բայց մի որ ել, ավանդ, մի որ, մենք այնքան պինդ պահ մտանք,  
Վոր փնտռեցինք, բայց ել իրար յերբե՛ք, յերբե՛ք չգտանք...

Հայնե, Հայնե, յերբ վոր անցան պահմտոցն ու փայտե ձին  
Վառաբանի շուրջը նստած քո յերգերը կարդացի...

## Ս Ր Ն Գ Ա Հ Ա Ր

Սրնգահար, ինչ ես նստել  
Քարի վրա այդ անգույն,  
Սիրունի՛դ ե այդտեղ հանգչում,  
Մեռյալների քաղաքում.

Ա՛խ, սիրտհար սրնգահար,  
Ի՞նչ ես իզուր նվագում:

Դեռ չի դարձել վոչ մի անցորդ  
Մեռյալների քաղաքից,

Սրինգդ սո ու բարձրացիլ,  
Գլուխդ քեզ հավաքի՛ր,

Մտի՛ր կյանքը, և հուզմունքից  
Կյանքի հիմը նվագի՛ր...

## ՀԱՐԿԸ ԳՆՈՒՄ Ե

Նստած ելի յես մի որ մեր կամին,  
Քեռիս ցորենն եր երնում մեր կալում,  
Սարից փչում եր աշունքվա քամին,  
Քամին քշում եր ու հարդը տանում:

— Քենի, ասացի, այդ ինչ ես անում,  
Դու ամբողջ հարդը տվեցիր քամուն,  
— Բան չկա, բալիկ, — ասաց ինձ քեռիս, —  
Հարդը գնում ե, ցորենն ե մնում:

Սմեն բանում ել եղպես ե, բալիկ,  
Ինչ վոր երնում ենք՝ տալիս ենք քամուն,  
Մեզ ել երնում ե աշխարհի քամին,  
Հարդը գնում ե, ցորենն ե մնում:

\* \* \*

Մենք վողջ աշխարհը երնում ենք հիմի,  
Հարդն ու ցորենը տալիս ենք քամուն,  
Ու յես հիշում եմ խոսքերը քեռուս,  
— Հարդը գնում ե, ցորենն ե մնում:

Երնում եմ յես ել յերգերս առ մի,  
Հարդն ու ցորենը տալիս եմ քամուն,  
Ինչ վոր չի մնա, կտանի քամին,  
— Հարդը գնում ե, ցորենն ե մնում...

## ՎՈՐՔԱՆ ԶԻՆՉ ԵՆ ԵՈՂՈՒՄ

Վորքան ջինջ են շողում մեր լեռները,  
Ո՛, յերգիչներ, յերգով կրակեցեք,  
Անիմաստ ե դառնում, անի, մեռնելը, —  
Ուրախության հիմը նվազեցեք:

Մեր սրտերը հրով վողողեցեք,  
Զարկերակս դողա թող ձեր շողից,  
Ո, յերգիչներ, զվարթ նվազեցեք,  
Մափահարում ե արդեն հողիս...

## ԻՆՉ ԱԶԳԵՐ ԵՆ

Ն. Թ.-ին

Ինչ աչքե՛ր են, ինչ մազե՛ր,  
Այս հյուսիսում անարև,  
Մեր արևն ես յերազել,  
Յերբ ծնվել ես այդպես սև...

Ո՛ւր ես նայում, այդպես, ո՛ւր,  
Հո՛ւր ես ուղում, կամ հուր,  
Լոկ մի լինիր դու տխուր,  
Իմ շողշողմեն, անուշ քույր:

Յեղի՛ր այդպես միշտ զվարթ,  
Քեզնով արբի ամեն մաքր,  
Դու վարդերի մեջի՛ վարդ,  
Դու իմ յերկինք աստղադարձ:

## ԴՈՒՐՍ ԿԳԱՄ ԱՐԴՅՈՒՔ

Սեվուկին

Դուրս կգամ արդյոք, այս մութ անտառից,  
Այս կաճաններում արդյոք չեմ կորի:  
Ա՛խ, թփերի մեջ յես քեզ եմ տեսել  
Վայրի քնքշությամբ ժպտացող մորի...

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳԻԺ ՄԻ ՅԵՐԳ Ե

Արփենիկ Չարենցին

Մանկությունը զիժ մի յերգ ե,  
Ուրախ մի հողմադաց,  
Դու մանկություն, դու յերգ ու խաղ,  
Խաղան, Արփիկ, խաղան:

Խաղացել ե այդպես մի որ  
Մանուկ Աբգար-Ադան\*,  
Խաղացել ե այդպես անգամ  
Աբգար-Ադի տղան...

Մանկությունը զիժ մի յերգ ե,  
Ուրախ մի հողմադաց...  
.....  
.....

\* Բանաստեղծ Չարենցի հայրը:

ԱՆԻԿԻՆ ՅԵՎ ՓՈԼԻԿԻՆ

Որորիք ես բալիկին,  
Ես մեր փոքրիկ Ֆուլիկին,  
Ես լուսեղեն ալիքին,  
Ես լուսավոր գալիքին:

Որորոցից կիջնի ցած,  
Փորսող կտա և կամաց  
Կերթա դեպի գուռը բաց,  
Դուրս կնայի զարմացած...

«Մի՛թե ելի դետին կա,  
Փորսող կտա վոր յերթա...  
.....  
.....

Իսկ մի որ ել մեն մենակ  
Նա թաթիթաթ կերթա բակ,  
Հետո կանցնի նա առուն,  
Հետո կերթա նա հեռուն:

Հետո կերթա նա փողոց,  
Հետո կերթա նա դպրոց,  
Կմտացվեն լաց ու կոժ,  
Մանկություն ու որորոց:

Կգան որե՛ր, ամառնե՛ր,  
Կերթա սարեր, անտառներ-  
Անվերջ կուղի նա յերթալ,  
Բայլե՛լ, քայլե՛լ անդադար...

Ել ի՞նչ փորսող, իմ անգին,  
Վորքան մե՛ծ ե, ահազի՛ն  
Աշխարհը մի սենյակից,  
Յեվ հասարակ մի բակից...

.....  
.....

## Ա Ր Բ Ե Ց Ո Ւ Մ

To—

**Ա**յդ աչքերով խորունկ ու ալեկոծ,  
Այդ հայացքով վսեմ ու դյուլթական,  
Այդ մաղերով ծփուն ու անհասնում,  
Ո՛ր, դու աշխարհ, աշխարհ կախարդական!

Ո՛ր, դու արհտ, լցված բարեքներով,  
Ո՛ր, տափաստան, բեղուն դու արոտից,  
Դողդողում եմ կանգնած յես քո զիմաց  
Հիացմունքից, սիրուց ու կարոտից:

Վորքան խոտ կա այստեղ, ո՛ր, վորքան խճտ,  
Վորքան ծաղիկ վայրի, վորքան կանանչ,  
Վորքան կակաչ կարմիր, վորքան բույսեր  
Ինձ անծանոթ, անհայտ ու անճանաչ...

Դեռ յես վորքան, վորքան պիտի ուսեմ,  
Ծաղկից ծաղիկ դնամ մանկան նման,  
Անցնեմ թփից մի թուփ բաղկատարած,  
Հիացմունքից դողամ, ուրախանամ:

Մինչ ճանաչեմ յես քեզ, մինչ չմնա  
Ինձ անծանոթ մի թուփ, խոտ մահացու,  
Յես քո գիրկն եմ նետվում, ո, տափաստան,  
Ով շողշողուն, արձակ տարածութուն:

Կգամ, թեկուզ հենց նույն մանկան նման  
Քո խորքերից դուցե տուն չդառնամ,  
Խոր խճճվեմ վայրի քո թփերում,  
Քո շողշողուն գրկում անհետանամ...

Վրնջում ե ամեն, ամեն մի ձի  
Տափաստանին հեռվից մոտենալիս,  
Իսկ յես յերգ եմ յերգում, շունչ ալոտ,  
Յես յերգով եմ գալիս...

## ՎՈՐՔԱՆ ԵՍ ԴՈՒ ԱՆՓՈՒՅԹ

(Ուսանողական)

Վորքան ես դու անփուլթ,  
Վորքան ես դու անհոգ,  
Քո գլխում անվերջ հորովել ե.  
Քեզ հաճախ նախատել,  
Յեզ հաճախ թովել,  
Յեզ հաճախ, հաճախ գովել են,  
Ո՛, փաստ ե սակայն,  
Վոր դու չիմացար  
Թե յերբ ե մեռել Գրոմվելը:

Ա.ՅՍ ՔԵԱՄԱՆՉԱՆ ԱՐԵՎԱԶՍԵՆ

Այս քյամանչան արևաձայն,  
Ո՞վ դրեց մեր զրքերի մեջ,  
Յերգեցիր ու չհովացար  
Սայաթ Նովա, Սայաթ Նովա:

Յերգեր թողեց մեր բաղմաձայն  
Մեր բաղմաբառ զրքերի մեջ,  
Յերգդ մնաց լսիլ դու անցար  
Սայաթ Նովա, Սայաթ Նովա:

Ով հանճարեղ բանաստեղծներ,  
Վար յերգել եք, անցել, չլնաք,  
Յերբ հողնում եմ ձեր յերգերից  
Նվագում եմ այս քյամանչան:

ԱՅՍՏԵՂ ԺԱՅՈՒՆԻ ԿԱՅԻՆ

1

Այստեղ ժայռեր կային,  
Ապառաժյա, անթեք,  
Դնշտ ե փոփում հիմա,  
Տարածություն անափ:

Յեկ յես շուռ եմ գալիս  
Այս քարափում նախկին,  
Քար եմ փնտոում, վոր քիչ  
Նստեմ հանգստանամ...

2

Այս դաշտերով անցա  
Այստեղ ափաղուտ եր,  
Լուություն եր անծայր,  
Անապատ եր, մնւթ եր:

Կրկին անցա, սակայն,  
Քաղնք տեսա այստեղ,  
Այստեղ աղմկալից  
Պայծան առավոտ եր:

## ՅԵՐԳ ԼԻՈՒԹՅԱՆ

\* \* \*

**Մ**եր կալերը լցվում են  
Յերգով, բերքով ու հացով,  
Թոնիրները մեր հանդած  
Բռնկվել են վառ բոցով.  
Քո կենացը, ով յերկիր —  
Բերկրության ու լույսի ծով:

\* \* \*

Բարձրացիր դու, վոսկե ծուխ  
Ծխակներից դեպի վեր:  
Յեկեք, յեկեք հնձվորներ  
Տունը մերն ե, հունձը մեր:  
Գինի, գինի մեղ, վարպետ,  
Մեր դաշտերի գինին բեր:

\* \* \*

Քեզ, առաջին բաժակը  
Ով Առաջնորդ ազգերի:  
Մենք քո յերգը յերգեցինք  
Աշխատանքի վեհ ժամին,  
Յեվ քո կենացն ենք խմում  
Մեր ցնծության սեղանին:

## ՍԵՎԱՆԱ ԼՃԻՆ

**Թ**րատել են կարծես կապույտ յերկինքը  
Յեվ շերտ-շերտ թափել այս ժայռերի մեջ:  
Սեվան, հանում եմ գլխարկս քո դեմ,  
— Վողջնույն, տղամանդ — զագաթների լիճ:

## ՉՈՐ ԱՌ ԾԱՂԿԱԶՈՐԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՆԳՍՏԻ ՏՈՒՆ

Փայտք մեր ընության, փայտք մեր աշխարհուն,  
Մեր Ծաղկածորի սարին ու ձորին.  
Յերանի նրան, ով վոր ծնվում ու  
Ապրում է այստեղ մանկության օրից:  
Հանգստի տուն է սա մի ընդարձակ,  
Յերկնքով խաղաղ, աստղերով խորին.  
Յեթե ուզում են լավ հանգստանալ,  
Այս տնից բացի, այս չքնաղ ձորից  
Ի՞նչ է հարկավոր բանաստեղծներին:

Թեկուզ քնեցի առանց սավանի,  
Կարոտ մնացի լվացարանի,  
Անտառն յեղավ ինձ և՛ տուն, և՛ տանիք,  
Ծառերն յեղան ինձ հարս ու ընտանիք,  
Բայց ապրում եմ յես ու կապրեմ քանի,  
Յես չեմ մոռանա բանաստեղծների  
Այս դեղին տունը յերկուհարկանի.  
Ո՛ր, յես հուշեր եմ տանում Մոսկվա  
Մեր այս առաջին հանգստյան տանից:

Դե՛, ձեզ հրաժեշտ, մնացեք բարի,  
Դուք մատուցողներ, դուք կառավարիչ,  
Հանգստացողներ, հյուրեր այս ձորի.  
Կգամ յես նորից և ձեր սեղանին

Վառ ծաղիկփնջեր կղնեմ նորից:  
Ինձ հետ տուն կզան մեղուներն աշխույժ  
Յեղ ծաղիկները չքնաղ սարերից.  
Ե՛հ, հուշն է բարի, մարմար հուշերը  
Յերկար են ապրում ամեն մարմարից...

Իսկ դո՛ւ, Ալազան, նստած շվաքում,  
Թերթիլ մեր անցած բանաստեղծներին,  
Վորոնք հանգստի տուն չգնացին,  
Չհավաքվեցին միևնույն բակում:  
Վոչ մի շերեփ ու սեղան չունեցան,  
Յեղ չնստեցին մի սեղանհացի.  
Գինու լիտարեն արցունք խմեցին,  
Յերգեցին շէպցին Յերգը՝ վիթխարի,  
Յերգը թողեցին, իրենք գնացին...

## A SONG OF MINE

(Արհեստանի շաքատանի 15-ամյակի առթիվ)

1

A poor shepherd was my father,  
A wool spinner was my mother.  
I was a child, a lambkeeper,  
The wind, the wind was my brother.

My childhood passed in a dark wood,  
We had no home, roof and fire;  
And we were poor and had no food,  
Only the sun, the sun was good.

And everywhere up and down,  
We were searching fire and shelter;  
We were searching a real ground,  
We were turning round, round.

Farther, farther we were passing,  
He was playing upon the flute;  
And my mother she was dancing,  
We were singing and advancing.

Holding on each other's shoulder  
As some drunkards we were wandering;  
And day by day it was colder,  
Father became older, older.

68

There was neither a fire nor land,  
But there was not a door open;  
And there was not a savior hand,  
There was only blast and sand.

And my father said one evening,  
„I am dying,-you search again;  
And when you find, on a morning  
Come, search my tomb and stamp, and sing.

And stamp and beat, sing and shout,  
Say“ My father, arise, arise,  
We have now a real ground,  
A land which I have found.

My father sang his song and died,  
As a shepherd alas, alas!  
And fell the flute, and fell the song,  
My mother died upon the sand.

2

Far far away near Ararat,  
In the fertile, sunny South,  
I have a land, I raise my hand  
To your good health, my fatherland!

Where's your tomb father sweet?  
I am searching for it now,  
I want to find, to stand on it,  
And sing and greet and stamp and beat.

And stamp and beat sing and shout,  
And cry and say „Rise, my father,  
Armenia is a real ground,  
It is the Land I have found“.

69

ՊՈՆՍՆԵՐ

## ԱՍԵՂԱՊՈՒՄ

Սիրով՝ յեղբորս —  
Գրեգոր Տոնոյանին

Ասեղը կա,  
Ու կլինի,  
Յերբ աշխարհում  
Դու չես կրնի:

## Ն Ա Ն Ե Ր Գ

1

Ասեղն ի՛նչ է.  
Դա շատ բարակ  
Չնչին բան է  
Մի հասարակ:

Շատ բաներում,  
Բայց թե հաճախ,  
Ասեղն է միշտ  
Կենում պատճառ:

Այ, որինակ,  
Պատմությունից  
Մի լեզունդ կա  
Միջնադարից:

Իսպանական  
Մի գորավար  
Հազին ունեք  
Մի ծակ շալվարտ

Զորավարն այդ  
Զենքը ձեռին,  
Իսկույն պետք է  
Մեկներ կռվի

Դե, շալվարն ել  
Զորավարի  
Հաճախ ունի  
Կարի կարիք...

Զարմանալու  
Վոչինչ չկա,  
Ծակ շալվարը  
Թեին ձգած,

Զորավարն այդ  
Մտամուտը,  
Շուրջը նայեց  
Ու չորս բոլոր:

Ի՞նչ եր փնտռում,  
Ե, ի՞նչ ասեմ,  
Մի հասարակ  
Փոքրիկ ասեղ:

Այդ բոպեյին  
Վողջ աշխարհում,  
Մի ասեղ եր  
Նրան գերում:

Իր սենյակում  
Շրջեց յերկար,

Բայց վոչ մի տեղ  
Ասեղ չկարտ

Փորձեց վազել,  
Փորձեց միալ,  
Ծակ շալվարով  
Ինչպե՞ս գնալ:

Յեվ գիտեք թե  
Նա ինչ արեց,  
Թագավորին  
Այսպես գրեց.

Եկվից առաջ,  
Հարկ է ասել,  
Մարդուն պետք է  
Թեկ ու ասեղ:

Յերեկոյան  
Մթնածամին,  
Քաղաք մտավ  
Հաղթ թշնամին:

Ի ուր բացին  
Զորավարի,  
Նա ընկած եր  
Ծակ շալվարին:

Յերբ սրերի  
Զայնը շաչեց,  
Զորավարը  
Բացականչեց.

— Ձեր սրերը  
Պատյան դրեք,  
Ինձ մի փոքրիկ  
Ասեղ տվեք:

Նրան տվին  
Թել ու ասեղ:  
Զորավարը  
Դարձավ ասեց:

— Այն յերկերն է  
Հաղթող ու լի,  
Ով վոր թել ու  
Ասեղ ունի:

2

Սակայն ինչձև  
Այս վայրկյանին  
Հիշեցի այդ  
Զորավարին:

Լեզունդ է դա  
Գուցե չնչին,  
Ինչին է պետք  
Յեզ ձեր ինչին:

Ի՞նչ կարիք կար,  
Առանց այդ էլ  
Նման բաներ  
Շատ ու շատ են:

Ո՞ւմ շարվարը  
Չի ծակոտել,  
Ո՞վ չի փնտրել  
Ասեղ ու թել:

Մեղնից ամեն  
Մեկն աշխարհքում,  
Շոր է կարել  
Իրա կյանքում...

76

Շեքսպիրն էլ  
Յերև՛կայեք,  
Մի որ նստած  
Շոր է կարել...

Ո՛, աշխարհում  
Չկան մի մարդ,  
Վոր շոր կարելն  
Ել չիմանա:

Ասեղը մեզ  
Պետք է նույնքան,  
Վորքան շապիկն  
Ե պետքական:

Վորքան շարվարը  
Մեր հագի,  
Գալիս է հին  
Ժամանակից,

Նա յիլ հին է  
Ու թանկացին,  
Առանց նրան  
Շոր չես հագնի:

Ծնվել է նա  
Հենց նույն որը,  
Յերբ ծնվել է  
Ի՞նքը՝ շորը:

Նախամարդն յերբ  
Շապիկ հագավ,  
Մուժ քարայրից  
Աշխարհ յեկավ:

Նա յերբ սկսեց  
Հողը վարել:

77

Ասեղ շինեց  
Ու շոր կարեց:

Ասեղը կան,  
Ու կլինի,  
Յերբ աշխարհում  
Դու չես լինի...

## Գլուխ ԱՌԱՋԻՆ

1

Ավանը մի  
Գյուղ և չնչին,  
Արագածի  
Կանաչ լանջին:

Կար մի խանութ  
Յերևանում,  
Մի խանութ ել  
Կար Ավանում:

Քիֆիլում ել  
Կար մի խանութ,  
Մոսկովում ել  
Կար են անում:

Մի խանութ ել  
Կար Մոսկովում,  
Մի խանութ ել  
Կար Ռոստովում:

Ես Ավանի  
Խանութը վոնց,  
Լինեի մի մե՞ծ  
Ասեղանոց:

Ասեղները  
Շարք-շարք շարված  
Յեզ տուփ առ տուփ  
Դասավորված:

Իրար վրա  
Ծալ-ծալ դրված,  
Դռան ել մի  
Թուղթ կար դրված:

«Ասեղներ կան  
Դարակ, դարակ,  
Յերկար, փայլուն  
Հաստ ու բարակ»:

— Հէյ, ժողովուրդ,  
Ասեղ առեք,  
Ձեր շորերը  
Տարեք կարեք:

Բզավում եր  
Ոհան Խանը,  
Ես խանութի  
Խանութպանը:

Ձայն եր տալիս  
Նա ծեղից ծեղ,  
— Յեկեք թեկ ու  
Ասեղ առեք:

Ասեղներին  
Հատնում չկար.  
Գրեր խոկոյն  
Վերից կգար:

Ասեղ կգար  
Նախ Մոսկովից:

Հետո կանցներ  
Նա Ռոստովից:

Հետո կանցներ  
Կասպից ծովից,  
Շոգին կգար,  
Կգար հովին:

Թիֆլիս կգար  
Ու Յերևան,  
Յերևանից  
Կանցներ Ավան:

Ավանից ել  
Խրճիթ ու տուն,  
Ասեղային  
Մեծ խնդություն:

Կար ե անում  
Ժողովուրդը,  
Ձե, վոր մերկ են,  
Ձե, վոր ցուրտ ե:

Ձե, վոր նոր են  
Յելել կովից,  
Տարիներն են  
Գալիս հեռվից:

Պեք ե կարել  
Ինչ վոր ծակ ե,  
Ինչ վոր բաց ե  
Պետք ե փակել:

Նստած անվերջ  
Կար են անում,  
Կար են անում,  
Ուրախանում:

Ամեն տան մեջ  
Քանի՛ ասեղ,  
Կար են անում,  
Այստեղ, այնտեղ:

Յնծություն ե  
Համատարած,  
Կար են անում  
Դռան առաջ:

Կար են անում  
Տանիքներին,  
Կալիբի մեջ,  
Դեղի ծերին:

Ձորերի մեջ,  
Քարափններին,  
Նստած կանաչ  
Գետափերին:

Լվանում են,  
Հագնում, հանում,  
Կարկատում ու  
Կար են անում:

Ով ծակ շալվար  
Ունի հագին,  
Ում վարտիկն ե  
Փայլում տակից,

Ում շալվարը  
Կոճակ չունի,  
Ում վերարկուն  
Մի ծակ ունի,

Կար են անում  
Կին թե ուղմիկ,

Դուրս յեկած մե՛ծ  
Պատերազմից:

Յերկիրն ե վողջ  
Նստած կարում,  
Ձմեռ, ամառ,  
Աշուն, դարուն:

2

Սահայն ինչպէս  
Գնալ առաջ,  
Միայն ասեղ  
Ու թիւ առած:

Փորձեք հաղա  
Լոկ ասեղով  
Վեր բարձրանալ  
Լեռնակողով:

Ասենք թեկուզ  
Արագածով,  
Ձմրան բքին  
Ալեկոծող:

Յեթե չունեք  
Քլունդ ու բահ,  
Չունեք պարան  
Ու ձեռնափայտ,

Վնչ մի ասեղ  
Ձեզ չի փրկի,  
Դուք տեղնուտեղ  
Կիջնեք ծնկի:

Կամ վճր մարդն ե  
Այն հանճարեղ,  
Վոր վազելիս  
Շոր ե կարել:

Վազքի ժամին  
Շորը չեն կարում,  
Անհնար է  
Դա աշխարհում:

Վսնց կարող ես  
Դու և վազել,  
Յեկ թե շարժել  
Թեև ու ասել:

Կամ պիտ վազես,  
Կամ պիտ կարես,  
Մեկն ու մեկը  
Պիտ կատարես:

Յեկ Մոսկովում  
Յեղավ ժողով.  
— Կիրթանվենք  
Մենք ասեղով:

Այն յերկիրը  
Գալիք չունի,  
Ով լող ասեղ  
Ու թեև ունի:

Ժամանակն ու  
Ժամն է հասել,  
Ամբողջ թափով  
Պետք է վազել:

Դրա համար,  
Նախ և առաջ,  
Հարկավոր է,  
Մեզ գործարան:

Հարկավոր է  
Հնոցարան,

Հարկավոր է  
Հալոցարան:

Հարկավոր է  
Մեզ տրաքտոր,  
Շարքացաններ,  
Ռեկս ու ավտո:

Սարն է մեր դեմ  
Մի վիթխարի,  
Յեկ մենք վազքի  
Ճանապարհին:

Ով վազելիս  
Նստի քարին,  
Ուշքն ու միտքը  
Հանձնի կարին:

Նայի անվերջ  
Ծակ շալվարին,  
Ասեղ ուղի  
Ճանապարհին:

Տրտնջա ու  
Դառնա սարկց,  
Դավաճան է  
Նա մեր դարին:

Իսկ յերբ հասնենք  
Մենք կատարին,  
Ով ուղում է  
Թող շոր կարի:

Ով ուղում է  
Նստի քարին,  
Ով ուղում է  
Յերգի, պարի:

Յեզ հրահանգ  
Յեկավ վերից,  
Յեկավ մեր մեծ  
Ղեկավարից:

Ու սկսվեց  
Շունդալից,  
Վերելքի մեծ  
Դժվար տարին:

## ՔՂՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԻ

1

**Ո**հան Խանը  
Հանգիստ չուներ.  
Նա մի քրոջ  
Տղա ուներ:

Կոմյերիտ էր,  
Ուներ անուն,  
Քարտուղար էր  
Նա շրջանում:

Կոչում էյին  
Բլրուլ Գեղամ.  
Ամառ լիներ,  
Թե ձյուն տեղար,

Նստած էր նա  
Ձիու թամբին,  
Գյուղի մեջ էր,  
Կամ թե ճամփին:

Տարին բոլոր  
Նա շրջում էր,  
Յեվ գյուղից գյուղ  
Ձեկսցում էր:

Ասոււմ եր նա  
Տաք-տաք ճառեր,  
Ինչպէս կովել  
Ու պայքարել:

Ինչպէս գյուղը  
Ղեկավարել,  
Ինչպէս ցանել,  
Ինչպէս վարել:

Ինչպէս սիրել  
Ու դադարել,  
Ինչպէս անգամ  
Շապիկ կարել:

Բայց ինչ աներ,  
Ուր ել գնար,  
Քեռուց ցուցմունք  
Պիտ ստանար:

2

Պանը տեսա՛վ,  
Հետդհետե,  
Պակասում ե  
Ասեղ ու թել:

Նամակ գրեց  
Նա Յերեան,  
Ասացին թե  
Ասեղ չկա:

Թիֆլիս գրեց,  
Պատասխան գա,  
Ասացին թե  
Ասեղ չկա:

88

Մոսկովից ել  
Նամակ յեկա՛վ,  
Գրում են թե  
Ասեղ չկա:

Բայց ովքեր են  
Գրում նրան,  
Ընկերներն իր  
Վաճառական:

Գրում են թե  
Ասեղ չկա,  
Թե աշխարհի  
Վերջը յեկա՛վ:

3

Մի որ Պանը,  
Մթնածամին,  
Պանութ քաշեց  
Մեր Գեղամին:

— Քրոջ տղա,  
Բողոք ունեմ,  
Ինչո՞ւ ասեղ  
Ու թել չունենք:

— Գործարան ենք  
Շինում բեռի,  
Հերկք մնանք  
Քելին գերի:

Հարկավոր ե  
Մեզ տրակտոր,  
Շարքացաններ  
Ռելս ու ավտո...

89

— Ա՛խ, եդ լեզուդ,  
լեզու հա չի,  
Չարխ ե կարծես  
Բերնիդ միջինս:

Տո՛ւ, մարդ դարձիր,  
Բան եմ ասում,  
Մենք ասեղ ու  
Թեւ ենք ուզում:

Ժողովուրդը  
Մեր սիրելի,  
Մնացել ե  
Առանց թելի:

Ի՞նչ տրակտոր,  
Տո, ի՞նչ ավտո,  
Աչքերդ մի  
Շուռ տուր պատով:

Բան չեք թողել  
Պանութում, տես,  
Դատարկ պատն ե  
Հայհոյում ձեզ:

Եսպիսի մեծ  
Ու սուր կարէք  
Դեռ չի յեղել  
Վոչ մի տարի:

Ինչքան ասեղ  
Կար խանութում,  
Պանը սրբեց  
Ու տարավ տունս:

Կեսը շարեց  
Ի՛ր գլխարկում,  
Հին վերմակում  
Ու սնդուկում:

Կեսն ել բուրբում,  
Որոբոցում,  
Կնոջ գրկում,  
Քրոջ ծոցում:

— Նեղ որերին  
Մեզ պետք կդա,  
Դուռը փակեց  
Ու դուրս յեկավ:

Դուռը ծեծեց  
Դուռը խորհրդի.  
— Ասեղ տվեք  
Ժողովրդին:

Մի որ Պանը  
Տուն դառնալիս,  
Տեսավ դեմից  
Մարդ ե գալիս:

— Բարե, Գեղամ,  
Նս վորտեղի՞ց.  
— Մեր հարեան  
Ղոյթուր գյուղից:

Անխժված ձին  
Թռիչք արեց,  
Ճանապարհը  
Փորձանք բերեց:

Զիուց ընկա,  
Շալվարս, տես,  
Վոնց ե ծակվել,  
Դիմուճ հմ քեզ:

Ձեյի տեսել  
Նստիս չարիք,  
Մնացել հմ  
Ճանապարհին:

Ամաչուճ հմ  
Գյուղը մտնել,  
Որն ել կարգին  
Դեռ չի մթնել:

Մութով, գոնե,  
Քայլեմ, գնամ,  
Վոր հարսնիքը  
Չվախենան:

Ուր ուղուճ ես  
Գնա, արի,  
Ինձ մի փոքրիկ  
Ասեղ ճարիք:

— Ասեղ չկա,  
Գնաս բարով,  
Շորդ կարիք  
Տրակտորով:

Մեր Բլբուլը  
Շնչակտուր,  
Սենյակ մտավ.  
— Բնւյր, ասեղ տուր:

— Ասեղ չկա.—  
Ասաց Մարոն,  
— Շորդ կարիք  
Շարքացանով:

— Մայր, ասեղ տուր,  
Դիմեց մորը.  
— Ասեղ չկա,  
Դիմիր հորդ:

— Հայր, ասեղ տուր.  
— Տո՛ւ, շան վորդի:  
Ասեղ թողիք  
Ժողովրդին:

5

Շրջկենտրոնում  
Ժողով յեղավ.  
— Սոսքը ըննե՛ ե  
Ընկեր Գեղամ:

Ե՛, ընկերներ,  
Ել ինչ ասել,  
Մնացել ենք  
Առանց ասեղ:

Յերկրորդ որն ե  
Այստեղ այնտեղ,  
Ինչ հմ փնտառում  
Թե՛լ ու ասեղ:

Դե, շալվար եր,  
Ծակվեց ելի,  
Գերի պետք ե  
Մնանք թե՛լին:

Մայր ե առել  
Մի մեծ բողոք,  
Բողոքում ե  
Մայրս՝ Շողոնս:

Բողոքում ե  
Հայրս՝ Արոն,  
Բողոքում ե  
Քույրս՝ Մարոնս:

Բողոքում ե  
Դարբին Շարոն,  
Բողոքում ե  
Դերձակ Կարոնս:

Քեռուս մոտն ել  
Ասեղ չկար,  
Ել ինչ կռիվ,  
Ել ինչ պայքար:

Արորով ել  
Մենք կվարենք,  
Բայց մեր շորը  
Ինչով կարենք:

— Պանդ ե, Գեղամ,  
Պանդ ե, նստի՛ր.  
Նրա հարցը  
Դրին նիստինս:

— Ո՞վ ե քեռիդ,  
Ով ե Արոն,  
Ո՞վ ե գյուղի  
Դերձակ Կարոնս:

Թափ ավեցին  
Քեռու քուրբը,  
Քեռու գլխարկն  
Ու սնդուկը:

Հին վերմակն ու  
Որորոցը,  
Կնոջ գիրկն ու  
Քրոջ ծոցը:

Ասեղ եր, վոր  
Թափվում եր ցած,  
Բոլորը հին  
Ու ժանգոտած:

— ԴԷ, ինչ կասես,  
Ընկեր Գեղամ,  
Նաքան ասեղ  
Հերիք չեղավ:

Ել ինչ բջջի  
Քարտուղար ես,  
Ել վճից պետք ե  
Դու պայքարես:

Թշնամին, տես,  
Նենգ ու խավար  
Ձեռքիդ ձրած  
Մի ծակ շալվար,

Ձայնդ ե խառնում  
Իր հավարին.  
— Տեսե՛ք, մեր ես  
Ղեկավարինս:

Ասեղ չկա,  
Շորը կարէ,  
Ես ինչ սր ե,  
Ես ինչ տարի:

Քարտուղար ես  
Չհասկացար,  
Ինչ տվեցին  
Են ել հագար:

Չդիմացար  
Մեր պայքարին,  
Քեզ թշնամին  
Չարկեց քարին:

## ԳՆՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

1

Անցան որեր,  
Անցան տարիք,  
Յեկավ մի վնո,  
Պայծառ գալիք:

Մեր կյանքը հաղթ  
Քայլեց առաջ,  
Ինչքան քայլեց  
Նոր փայլ առավ:

Մի առափոտ,  
Դղրդոցով,  
Մի բան անցավ  
Գյուղ փողոցով:

Տրակտորն եր,  
Յերևանից,  
Ամբողջ գյուղը  
Թափվեց տանի:

Նա ծուխ տվեց.  
Վեր բարձրացավ,  
Ոհան իտանի  
Դռնով անցավ:

Ոհան Խանը  
Գլուխը կռթ,  
Մի սֆ արեց  
Ու արեց, — սխտ

Մթազնեցին  
Աչքերն իր ծեբ,  
Մի անգամ ել  
Նա նայեց Վեր:

Որորվելով  
Գետնին ընկավ,  
Յեվ տեղն ու տեղ  
Իսկույն հանգավ:

2

Նույն Ավանում  
Կա մի խանութ,  
Մոսկովում ել  
Կար են անում:

Մի խանութ ել  
Կա Մոսկովում,  
Մի խանութ ել  
Կա Ռոստովում:

Մի խանութ ել  
Կա Քիֆլիսում,  
Մի խանութ ել  
Յերևանում:

Վորքան կիւղես  
Ասեղ գնիր,  
Ասեղի մեջ  
Կուղես քնիր:

98

Վազբով հասնը  
Մենք կատարին,  
Ով ուզում է  
Թող շոր կարի:

Ով ուզում է  
Նստի քարին,  
Ով ուզում է  
Յերգի, պարի:

Ծնքան ասեղ  
Թեկ կա հիմա,  
Փորձիր հապա  
Գրել նամակ:

Ասեղ կգա  
Քեզ Մոսկովից,  
Ասեղ կգա  
Քեզ Ռոստովից:

Կանցնի կգա  
Կասպից ծովից,  
Շոգին կգա,  
Կգա հովին:

Քիֆլիս կգա  
Ու Յերևան,  
Յերևանից  
Կանցնի Ավան:

Միլիոններով  
Ասեղ կգա,  
Ասեղներին  
Նլ վերջ չկա:

99

7\*

Ո՞վ ե սակայն  
Հին շոր կարուժ,  
Այս խնդության,  
Այս մեծ դարուժ:

Մենք բոլորս  
Մերկ ու կքած,  
Վոտքի յելանք  
Մետաքս հագանք:

Կյանքը դարձավ  
Վորքան պայծառ,  
Ունենք անգամ  
Մենք տոնածառ:

Դարձանք հարուստ  
Յեկ ունեւոր,  
Կյանք, հիասքանչ  
Յեկ փառավոր:

Յես ըո գովքն եմ  
Յերգում, լսիր,  
Կոմունիզմի  
Արշալույսին:

Խոսք եմ խոսում  
Թերված ուսիդ,  
Գեթ մի վայրկյան  
Դու ինձ լսիր:

Յեղա յես ել  
Մի որ յերեք,  
Յեկ ուզում եմ,  
Վոր ինձ ներես:

Նման այն հին  
Զորավարի,  
Լեզենդական  
Ու վեթխարի,

Իմ հաղին ել  
Կար մի շալվար,  
Յեկ նա կարիք  
Ունեք կարի:

Յեկ յես, կովից,  
Յերթից առաջ,  
Ծակ շալվարը  
Թեխ առած,

Վաղեցի դես,  
Վաղեցի դեն,  
Ու փնտոսցի  
Ասեղ ու թել:

Կանչեցի յես  
Լուսին, մութին,  
— Ասեղ տվեք  
Ժողովրդին...

Բայց նա յեկավ,  
Նոր կյանքը մեծ,  
Յեկավ փառքով  
Հաղթանակեց:

Տրատկորին  
Նստած յեկավ,  
Յեկավ հզոր,  
Յերկաթաբայլ:

Փնօք աշխարհին,  
Փնօք քեզ գալիք,  
Փնօք քեզ պայծառ  
Մեր Ստալին:

## Վ Ե Ր Զ Ե Ր Գ

Ասեղն ինչ է.  
Դա շատ բարակ  
Չնչին բան է  
Մի հասարակ:

Շատ բաներում  
Բայց թե հաճախ,  
Ասեղն է միշտ  
Լինում պատճառ:

## Գ Ա Յ Լ Ա Ս Ա Ր

## Ն Ա Խ Ե Ր Գ

Չորստ անցած տարիներին քարայրին,  
Ճամբորդի պես դեռ կատարը չհասած,—  
Յե՛վ ձեռքերին, և գլխարկին տարածված,  
Ձեզ եմ կանչում Սանասար ու Բաղդասար:

— Հեյ հեյ, հեյ հեյ—ձայն եմ տալիս ահա յիս,  
Ձեզ եմ կանչում ո, անուշներ հարազատ,  
Վեր բարձրացե՛ք իմ գառնարած ընկերներ,  
Յեկեք նորից գնանք դեպի Գայլասար:

Մի անգամ ել թող ձեզ տեսնեմ ու զգամ,  
Գրկախառնվեմ, ընկնեմ ձեզ հետ ճանապարհ,  
Ձեզ հետ նորից Գայլասարը բարձրանամ,  
Ձեզ հետ քայլեմ, ձեզ հետ լինեմ քարեքար:

Առավոտ է, առավոտ է, վեր կացե՛ք,  
Ո՛ւր մնացիք ձորերում այդ ահալի.  
Յե՛վ զընգում է, ծանոթ մի ձայն մտերիմ.  
— Հեյ հեյ, հեյ հեյ, մենք գալիս ենք մենք գալիս...

## ՔՐՈՒՆ ԱՆՈՒՋԻՆ

1

**Մ**եր գյուղի դեմ կար մի բարձր, բարձր սար,  
ենքան գայլ կար, վոր կոչվում էր Գայլասար.  
Չեմ իմանում դեռ կամ արդյոք այդ սարը,  
թե դարձել է վաղուց հողին հավասար

Գայլաբուն կար յուրբաբանչուր քարի տակ,  
Ամեն բնում քանի գայլ ու քանի ձագ.  
Ամեն բունը սև կոճղի պես վայլփլում,  
Պսպղում էր հեռվից վորպես քարանձավ:

Ով գալիս էր պատմում էր միշտ այդ սարից,  
Նախորդ լինի, հովիվ լինի վիթխարի,  
Հերոս էր նա, ով գիշերով սար գնար  
Իր զխարկը թողներ նրա մի քարին:

Ձմրան անբուն գիշերներին բջալի,  
Գյուղում նստած պատմում էին այդ սարից,  
Ով յերբ անցավ է ինչ արկած ունեցավ,  
Պատմություններ, պատմություններ սոսկալի...

Գյուղում միայն մի հովիվ կար, վոր անվախ  
Գայլասարը շուռ էր տվել աջ ու ձախ.  
— Պատմիր, Ասո, պատմիր, պատմիր մեզ լսենք,  
Յե՛վ պատմում էր հովիվ Ասոն գլխակախ:

— Ճանաչում է ինձ ամեն գայլ եղ սարում,  
Սարի լանջին միշտ կրակ եմ յես վառում,  
Գուրս են գալիս կես գիշերին խմբերով,  
Հավաքվում են շրջան կազմում ու պարում:

Պար են գալիս, վճնց են պարում թաթեթաթ,  
Հաշիվ չկա, ենքան շատ են, ենքան շատ.  
Իսկ յես անվերջ ցախ եմ դնում կրակին,  
Դեմս բոցեր, շուրջս՝ մի մեծ գայլապատ:

Դե, Գասպարի տունը գիտեք, տուն հո չի,  
Սարի տակին, ջրաղացի առաջին,  
Բարձրանում են տան կտուրին խմբերով,  
Տանը մենակ քնած է խեղճ նախըջին:

Մի որ լսեմ ձայն է գալիս գիշերով,  
Նախըջին է, ձայն է տալիս տան միջից.  
— Հեյ, Ասատճւր, հեյ, հեյ, Պաչո, ոգնեք ինձ,  
Գայլերն յեկել ներս են մտել յերթիկից:—

Պճեկ փախչում է յետեկցն ել լուսնյակին  
Վաղ է տալիս սպիտակ մի մարդ անագին.  
Նայեմ տեսնեմ ջաղացպանն է, մեր Պաչոն,  
Վճնց է վազում ձեռքը դրած թխակին:

Գու մի ասի, ներս են մտել ջրաղաց.  
Գայլի համար են, ինչ աղքատ, ինչ աղա,  
Բարձրացել են ջրաղացի քարերին,  
Թե՛ խեղճ Պաչո, մենք ծափ դարկենք դու խաղա:

Մոտ են յեկել կամաց կամաց, թաթեթաթ,  
Պաչոն վախից գնացել է պատեպատ,  
Յե՛վ պատմում է հովիվ Ասոն գլխակախ,  
Գյուղի գիշեր հազար զրույց ու հեքյաթ...

Ո, վեթիաբրի, ո, ահարկու Գայլասանր,  
Գիտեք ինչքան, ինչքան գայլ կար, ինչքան գայլ.  
Դունչը կաթին, թաթը դրած մոր թաթին,  
Ամեն մի ձագ գայլ եր դարձել քայլեքայլ:

2

Ընկուզենին որորվում ե հով բակում,  
Զմղմ աղեն նստած նրա շվաքում  
Միտք ե անում Գայլասարի դեմուզեմ,  
Միտք ե անում և հոնքերը հավաքում:

Դեմը նրա քսան տուն ու քսան դուռ,  
Քսան թոնիր և յերթիկներ կավակուռ,  
Թոնիրներից, յերթիկներից անդադար  
Մուխ ու բոց ե յեկնում հորդ ու խառնիխուռն:

Բակի առաջ, ժայռերի մեջ մի աղբյուր,  
Աղի ջուրն ե, վոր կոչվում ե Զքմաղբյուր,  
Այդ աղբյուրից պղինձներով, կփերով,  
Քսան հարսներ ջուր են կրում, գուլալ ջուր:

Քսան մշակ և քսան կին մութից մութ,  
Ներս են մտնում ու դուրս գալիս շուտափուլթ,  
Յեկ աղջիկներ արմաղան ու շարմաղան,  
Շաղ են տալիս բակում անվերջ ջուր ու կուտ:

3

Ես ինչ գետ ե թափ ընկնում,  
Ես ինչ յերդ ե չափ ընկնում,  
Ես հւմ աղունն են աղում,  
— Զմղմ աղի աղունն ե:

106

Եթափ առ, իջիր իմ գետակ,  
Վոչ կով ունեմ, վոչ մատակ,  
Պտտվիր իմ ջաղացքար,  
Գայլասարն ե, Գայլասար:

Գիշերն անցավ քուն չունեմ,  
Սաղ աշխարհքում տուն չունեմ,  
Գայլերն յեկան սարից ցած,  
Դուռս են ծեծում բարկացած:

Մի պարկ գրկած մի պարկի,  
Սպասում են շաքք շաքքի,  
Զմղմ աղեն ե տերը  
Մեր գյուղին ու աշխարհին:

Դու ինձ տուն ես աշխարհքում,  
Յես ծերացա քո գրկում,  
Յերկու քար են փաթաթվում,  
Մեկն անվերջ ե պտտվում:

Մեկը բատրակ, մեկն աղա,  
Մեկը յես եմ, մեկն աղան,  
Լուս ե բացվում աշխարհին,  
Հայ պտտվիր, իմ ջաղաց:

4

Ղու գու դճւ,  
Անավոտ շուտ մեր գյուղում,  
Ո՞վ ե կանչում ծուղրուղու.  
— Զմղմ աղի աղունն ե:

Հարյուր հիսուն գեր, ուրախ,  
Կարմրակատար քաջահաղթ,

107

Ո, վիթխարի, ո, անարկու Գայլասանը,  
Գիտեք ինչքան, ինչքան դայլ կար, ինչքան գայլ.  
Դունչը կաթին, թաթը դրած մօր թաթին,  
Ամեն մի ձագ դայլ եր դարձել քայլեքայլ:

2

Ընկուղենին որորվում ե հով բակում,  
Զմզմ աղեն նստած նրա շվաքում  
Միտք ե անում Գայլասարի դեմուղեն,  
Միտք ե անում ե հոնքերը հավաքում:

Դեմը նրա քսան տուն ու քսան դուռ,  
Բասն թոնիր և յերթիկներ կավակուռ,  
Թոնիրներից, յերթիկներից անդադար  
Մուխ ու բոց ե յիլնում հորդ ու խառնիխուռն:

Բակի առջ, ժայռերի մեջ մի աղբյուր,  
Աղի ջուրն ե, վոր կոչվում ե Զրմաղբյուր,  
Այդ աղբյուրից սղիճճներով, կժեղով,  
Բասն հարսներ ջուր են կրում, գուլալ ջուր:

Բասն մշակ և քսան կին մութից մութ,  
Ներս են մտնում ու գուրս գալիս շուտափուլթ,  
Յե՛վ աղջիկներ արմաղան ու շարմաղան,  
Շաղ են աալիս բակում անվերջ ջուր ու կուտ:

3

Ես ինչ գետ ե թափ ընկնում,  
Ես ինչ յերդ ե չափ ընկնում,  
Ես հւմ աղունն են աղում,  
— Զմզմ աղի աղունն ե:

106

«Թափ առ, իջիր իմ գետակի  
Վոչ կով ունեմ, վոչ մատակի  
Պտտվիր իմ ջաղացքար,  
Գայլասարն ե, Գայլասար:

Գիշերն անցավ քուն չունեմ,  
Մազ աշխարհքում տուն չունեմ,  
Գայլերն յեկան սարից ցած,  
Դուռս են ծեծում բարկացած:

Մի պարկ գրկած մի սարիկի,  
Սպասում են շարք շարքի,  
Զմզմ աղեն ե տերը  
Մեր գյուղին ու աշխարհքին:

Դու ինձ տուն ես աշխարհքում,  
Յես ծերացա քո գրկում,  
Յերկու քար են փաթաթվում,  
Մեկն անվերջ ե պտտվում:

Մեկը բատրակ, մեկն աղա,  
Մեկը յես եմ, մեկն աղան,  
Լուս ե բացվում աշխարհքին,  
Հայ պտտվիր, իմ ջաղաց:

4

Ղու գուղճ,  
Առափոս շուտ մեր գյուղում,  
Ո՞վ ե կանչում ծուղրուղու.  
— Զմզմ աղի աղունն ե:

Հարյուր հիսուն գեր, ուրախ,  
Կարմրակատար բաջահաղթ,

107

Հավ ե շրջում կըտկըտում,  
Քաղից թաղ ու տնից տուն:

Նրանց կողքից, աջ-ձախից,  
Աքլորներ կան կատաղի,  
Մերթ սուղվում են դուրս գալիս,  
Մերթ թեկերն են թափ տալիս:

Սեթ նայում են արևին,  
Սեթ նայում են հազեբին,  
Ցեփ հավերն ել որորուն  
Իրենց մեջքն են շորորում:

Փշվում, բացվում, բարձրանում,  
Հով են տալիս, հով առնում,  
Արտերի մեջ կըթկըթում,  
Փնտուր թափում, թփրտում:

Բարձրանում են դար ու սար,  
Հասնում մինչև Գալառար,  
Գնում հասնում մինչև Վանք,  
Մինչև գյուղը հարեան:

Այնպես հպարտ են շրջում,  
Մերթ բացվում են, մերթ թռչում,  
Կարծես նրանք հավեր չեն,  
Արծիվներ են ցած իջել:

Ուր գնում են, ուր անցնում,  
Բուն են դնում, ձու ածում,  
Նրանց բունն ու նրանց ձուն  
Մանոթ ամեն գյուղացու:

Մուտք են գործում կալից կալ,  
Ուր վոր ցորեն ու կուտ կա,

Ո՞վ կարող ե բարկանալ  
Նրանց բշիլ կամ ձեռք տալ:

5

Մյան, մյան,  
Ո՞ւմ կատուն ե մլավում,  
Ո՞ւմ կատուն ե արշավում,  
— Զմզմ աղի կատուն ե:

Թավամազ ու յերկարպոչ,  
Շերտավոր ու շերտափոր,  
Սև պոպոռն աչքերով,  
Իրենց վոքերիկ ձագերով:

Շարան-շարան, մերթ թռչում,  
Սլավում են ու շրջում,  
Գեղից դեղ ու բակից բակ,  
Մի մարազից այլ մարազ:

Մի մառանից այլ մառան,  
Մի ամանից այլ աման,  
Կալից կալ ու տնից տուն,  
Առավոտից իրիկուն:

Մագլցում են ծառից ծառ,  
Բարդիները յերկնատար,  
Մի կատարից այլ կատար,  
Կատարներից դեպի վար:

Սլանում են հեփհեփ  
Ճնճղուկների յետեից,  
Արշավում են վերեից,  
Թագուն նայում ներքեից:

Վնյ թե նրանց հանդիպի  
Մի խեղճ կատու աղքատի,  
Դեմ են տալիս մի պատի,  
Ննջան խփում են թաթին,

Ննջան խփում ճակատին,  
Ննջան խփում դագաթին,  
Թաթն ու դունչը արնոտում,  
Հետո նստում հոտոտում:

Անց են կենում շարանով  
Գյուղի կանաչ կալերով,  
Տանիքներով, դեղերով,  
Առուններէ յեղբերով:

Գնում հասնում ջրաղաց,  
Ամեն մեկը մի աղաց,  
Պտտվում են պարկից պարկ,  
Յեկ դուրս գալով միաշարք,

Գյուղ են դառնում հաղթալի.  
Նայեք դրանց շարանին,  
Կարծես հետու անտառից  
Վազրի ձագեր են գալիս:

6

Հնֆ, հնֆ, հնֆ,  
Ես հիւսն շներն են հաջում,  
Բարձր, բարձր կլանչում.  
— Զմզմ աղի շներն են:

Քսան հատ են, քսան շուն,  
Նրանց ձայնը չարաշուք

110

Տարածվում ե կալից կալ,  
Գնում հասնում Գայլասար:

Յերբ քնած ե ամեն շունչ,  
Հոռթյան մեջ տրամաշուք,  
Յերկնք, յերկնք կլանչում,  
Կաղկանձում են ու հաջում:

Վազվզում են կալերում,  
Գյուղի լուսնյակ սարերում,  
Խմբով գնում ու գալիս,  
Թաղից թաղ են ձայն տալիս:

Տերն են կարծես մեր գյուղի,  
Առանց վախի, յերկյուղի  
Աղմկում են, տաքանում,  
Կարծես գյուղն են բաժանում:

Հարկ են տալիս ու առնում,  
Բարկանում ու սպառնում.  
Կանգնում նայում են լուսնին,  
Թռչում իրար ուս ուսի:

Իսկ թե նրանց հասհասին  
Դեմից դուրս գա մի թաղի,  
Մեջեն առնում խեղճ թաղուն,  
Գյուղ տալիս, դադաղում:

Քշում տանում գյուղից դուրս,  
Ձորակները մութ ու լույս.  
Թաղու դռանն սպասում,  
Փռռտում են ու հաղում:

Նստում հետո, տխրաղիմ,  
Գայլասարի դեմուղիմ,

111

Զարհուրելի գոնգոռնում,  
Կաղկանձում են ու փոռնում:

Յեկ հարեան Վանք գյուղում  
Պառլած հարդե անկողնում  
Վեր ե թռչում սարսափած  
Գեղջուկ կինը՝ Արսափան:

— Կնիկ, ինչո՞ւ վեր թռար,  
Վերմակն ինչո՞ւ ցած առար,  
Քնիք, ինչ ես հառաչում,  
Աղի շներն են հաջում:

Յեկ մարդ ու կին կիսաբաց,  
Վոռնոցներից սարսափած,  
Իրենց յերեսն են խաշում,  
Կրկին քնում ու հանգչում:

7

Ես ո՞ւմ կոչիւ ե շառաչուն  
Գետի միջին բառաչում,  
Ո՞ւմ նախիրն ե խմում ջուր-  
— Զմզմ աղի նախիրն ե:

Ամպի նման սպիտակ  
Ես ո՞ւմ հոտն ե սարի տակ,  
Ո՞վ ե կանգնել ահազին  
Այծաճորթը իր հագին:

Նայեք քանի հարս ու կին,  
Նստած իրար կողք կողքի,  
Կաթ են կթում հյութալի,  
Յեկ տիկ առ տիկ կաթով լի:

Յած են իջնում խմբերով,  
Անցնում կանաչ թմբերով,  
Ճամբին տկերը հանում  
Աղի արտն են քաղհանում:

Դուրս են թափում փառ ու փուռ,  
Մոլախոտեր ու դանդուռ,  
Բարձրանում են հետ լուռ  
Վոտարորիկ ու տխուր:

Նորից իրենց կաթով լի  
Տկերն առած շալակին,  
Բակ են մտնում թեկ թեկի,  
Շարքով իրար յետևից:

Որորում են, շորորում,  
Կանաչ կարմիր շորերում,  
Անցնում աղի դեմ դեմից,  
Ամեն մեկը մի շեմից:

Թոնիր թոնիր անցնելով,  
Կաթը տիկ տիկ լցնելով,  
Շերեփի շերեփի խառնելով,  
Բաֆն ու քուֆը առնելով:

Անվերջ կաթ են յեռացնում,  
Դատարկում են ու լցնում,  
Սառեցնում ու տաքացնում,  
Պղինձ պղինձ հովացնում:

Ծուխ ե յելնում ծառ ու մուռ  
Յերթիկներից կավակուռ,  
Մառաններից, մարագիլի,  
Յեկ գոների արանքից:

Զմզմ աղին ծառի տակ,  
Միտք ե՛ անու՛մ շարունակ,  
Նայում ե՛ ես բոլորին,  
Ծիւի կապու՛յտ վոլորին,

Ես փառքին ու ես շուքին,  
Դռներին ու տանիքին,  
Բայց այրում ե՛ իր հոգին  
Մի տխրու՛թյուն ահագին:

Գայլասարն ե՛ դեմու՛ղեմ,  
Յե՛վ նա լուռ ու տխրա՛ղեմ  
Աչքը տված ե՛ղ սարին,  
Գայլասարի կատարին,

Նայում ե՛ հար, վշտաբեկ,  
Որերն անցնում են մեկ-մեկ,  
Յետ չեն դառնում ել յերբեք,  
Ինքն ել դառնում ե՛ բեկ-բեկ:

Վորքան ձագ կա, վորքան ձագ,  
Ենտե՛ղ, ամեն քարի տակ,  
Ամպերի հետ հալասար,  
Ո, Գայլասա՛ր, Գայլասա՛ր...

## ՔԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

1

Քյուղի ճամբին, աղի տան դեմ միայնակ,  
Գաղտագողի ծվարել ե՛ մի տնակ,  
Բարձրանալով կուչ ե՛ յեկել մի ժայռի,  
Զմզմ աղի դռների դեմ տաքանա...

Հովվի տունն ե՛. կն, ինչ տունն ե՛, վոր կանգնի,  
Վոտքով զարկես գլխի վրա ցած կրնկնի.  
Գարձես մեկը հարդ ե՛ կրել, գնալիս  
Իր կողովը մոռացել ե՛ մի ժայռի:

Ամեն անգամ, յերբ իջնում ե՛ յերեկոն,  
Աղի կովը անցնում ե՛ տան տանիքով,  
Առատաղը ներս ե՛ իջել վերեկից,  
Լույս ե՛ շողում լայն ձեղքերի արանքով:

Նայեք ե՛ղ դորշ տնակին  
Վոչ ծուխ ունի յերթիկին,  
Վոչ թոնիր ու տանտիկին,  
Վոչ պղինձներ ահագին:

Տանիք ունի մի խարխուլ,  
Դռան առաջ մի կաղ ուլ,  
Յե՛վ մի աքլոր անփետուր,  
Յե՛վ մի կուլա առանց ջուր:

Յեղիճներ են բարձրացել,  
Վայրիվերո հոացել,  
Աղի կոփն և արածել,  
Կոխկրտեղ ու հեռացել:

Ո՞վ և հնտեղ մեծացել,  
Դռան առաջ չորացել  
ես ինչ կուժ և մնացել,  
Մանեն ձւր և գնացել:

«Փըշո, փըշո  
Զմզմ աղի կատուն,  
Զմզմ աղի խաթուն,  
Յես Մանեն եմ անտուն:

Քըշո, քըշո,  
Զմզմ աղի հավեր,  
Զմզմ աղի կովեր,  
Ավլեր, ավլեր ավել:

Փառ, փառ,  
Հին մոխիրը հանեմ,  
Քթոց քթոց տանեմ,  
Թոնդիրները վառեմ:

Հառ հառ,  
Մաղ մաղ ալյուր մաղին,  
Տաշտակ տաշտակ շաղին,  
Ուտի Զմզմ աղին:

Փըշո, փըշո,  
Մութը իջավ Մանե,  
Թոնրից կրակ հանեմ  
Տունս կրակ տանեմ:

— Նանեն կրակ և բերել,  
Նանեն մածուն և մերել,  
Թռչկոտում են վար ու վեր  
Յերկու փոքրիկ մանուկներ:

Թառ լեցուն կրակով,  
Ներս և մտնում դանակով,  
Վոտաբորիկ մի խեղճ կին,  
Ցնցոտիներ իր հագին:

Կրակարարն և աղի,  
Արտեր չունի, վոր քաղի,  
Ալյուր չունի, վոր մաղի,  
Շորեր չունի, վոր կախի:

Զմզմ աղի հնամյա  
Թոնիրներն և վառում նա.  
Գնում և միշտ մութ լուսին,  
Մի շալ գցած իր ուսին:

Մի հին գոգնոց և կապում,  
Նախ նա մոխիրն և թափում,  
Թոնիր-թոնիր կռանում,  
Հին մոխիրն և վեր հանում:

Քթոց-քթոց դուրս տանում,  
Թոնրածակը բաց անում,  
Ջուր և բերում ու ցանում,  
Մինչ արեն և բարձրանում:

Հետո իրար և անցնում,  
Ցախ և բերում ու լցնում,  
Յեվ գոգնոցով հնամեջ  
Հոգ և լցնում Թոնրի մեջ:

Կոանում ե մերթ ակին,  
Յեկ թոնրատան լայն ծակից,  
Փուքս ե տալիս ու փչում,  
Մինչև ցախն ե ճաթճաթում:

Հետո գնում ու գալիս  
Պեչյերկաթներ քաշ տալիս,  
Բերում գցում հեկիհեկ,  
Թոնրի վրա խաչաձև:

Յերեկոյան տուն գալիս  
Աղեն կրակ ե տալիս,  
Մի թաս կրակ շեկաքած  
Բերում ե նա իբրև վարձ:

Բերում ե նա գնում ցած,  
Յեկ յերեքով հավաքված,  
Թասն են զրկում, տաքանում,  
Մանեն գոգն ե բաց անում:

Դուքս ե հանում մի փարչ թան,  
Մի հատ լոջ ու հին չորթան,  
Նոշը բրդում թանի մեջ,  
Շուռ են տալիս փարչն անվերջ:

Ունեն միայն մի գդալ,  
Հերթով պետք ե իրար տան,  
Յեկ գդալն այդ միակող  
Պտտվում ե փոխնիփոխ:

Պաղ թան ուտում, հովանում,  
Փարչը սրբում լվանում,  
Գրկում իրար տաքանում,  
Հեքյաթ ասում ու քնում:

Առավոտյան մութ լուսին,  
Հին շալն առած իր ուսին,  
Մանեն գնում ե գործի  
Մանուկներն ել միասին,

Մի մի ճկպոտ ձեռներին,  
Սար են քշում դառներին,  
Դռան թողած մի կաղ ուլ,  
Յեկ մի աքլոր անփետուր,

Յեկ մի կուլա առանց ջուր,  
Յեկ մի խրճիթ առանց դուռ,  
Յեկ մի յերթիկ առանց ծուխ,  
Զմա՞ աղա ե մի դյուղ:

3

Զմա՞ աղեն տղա ուներ քաջատուր,  
Գյուղում նրան կանչում եյին Պաշատուր,  
Պաղ եր անում նա ձիերի թամբի հետ,  
Դառնում եր նա մանուկների խմբապետ:

Պաղի միջից դուքս եր գալիս հենց կեսին,  
Թոչում եր նա Սանասարի մերկ ուսին,  
Բաղդասարին հեծած անցնում կալիբով,  
Թուրք հանում ցույց եր տալիս մյուսին:

Հավաքում եր աքլորներին տներից,  
Վառիկներին դուքս եր քաշում բներից,  
Ո՞վ կարող եր նրանց դռնով անցկենալ,  
Քրքրս տալիս, բաց եր թողնում շներին:

Ո՞վ կարող եր Զրմաղբյուրին մոտենալ,  
Կուժը ուսել աղի աղբյուրը գնալ,  
Աղի ջրից աղեն միայն պիտ խմի,  
Ով վոր գնար, կուժը ենտեղ կնար:

Յեկավ մի որ Խաչատուրը արտոնից,  
Հարայ տվեց վոտը դարկեց հոր վոտին.  
— Մեր գառներից հիսուն գառ ե պակասել,  
Նսոր նորից գայլ ե խփել մեր հոտին:

Ջեղ ցույց կտամ Բաղդասար ու Սանասար.  
Բակում ինչքան լափուկներ ու քարեր կար,  
Ծոցը լցրեց ե վաղ տվեց կատաղի  
Ասատուրի կուժը արեց քարեքար:

Բունց նրանց աքաղաղին անկատար,  
Վորի պոչին մեն մի քանի փետուր կար,  
Դաշտից բերեց աքլորներին իր յերկու  
Գրկեց նրանց ե հաղթական տարավ կալ:

Աքլորները փքվեցին ու բացվեցին,  
Առաջ յեկան, նորից յետ-յետ գնացին,  
Սանասարի աքաղաղը թալրտաց,  
Կալում նրա փետուրները մնացին:

Մանեն նստած ցախ եր լցնում լուռ ու մունջ,  
Ու տաքանում Ջմգմ աղի թոնրի շուրջ,  
Խաչատուրը քամու նման ներս խուժեց  
Քեղճ Մանեյին հրեց գցեց թոնրի մեջ:

Հետո վաղեց, հարայ տվեց բարձրաձայն,  
— Պառավ Մանեն թոնիր ընկավ մահացավ,  
Մեր պղինձն ել խեչիերկաթից գլորվեց,  
Կաթը թափվեց, թոնրածակից բարձրացավ:

Լուսաբացին Ջմգմ աղեն կատաղած,  
Կանչեց գլուղի մանուկներին գառնարած,  
Մի խումբ վտիտ մանուկներ ու պատանի  
Յեկան խսուռն հավաքվեցին տան առաջ:

Կանգնեց աղեն մատնեմատին մատանի.  
— Լսեք, — ասաց, — մանուկներ ու պատանի,  
Ձեմ ունեցել կյանքում վոչ մի նեղուժյուն,  
Ախ չեմ քաշել ու հողս չուսնեմ մի բանի:

Նայեք ահա թոնիրներին ու տանիս,  
Յերթիկներին նայեք քանիս են, քանիս,  
Ծուխ ու բոց ե անվերջ յեկնում դեպի վեր,  
Իմ ծխի դեմ մոլորվում ե դիժ քամին:

Ո՞ւմ թոնրից են անվերջ մոխիր դուրս հանում,  
Թոնիրներս չեն պաղում ու հովանում,  
Ով ծուխ չունի՛ր՝ յես եմ նրան ծուխ տալիս,  
Վանքից գալիս իմ թոնրից են բոց տանում:

Մինչև իմ սև աքաղաղը չկանչի,  
Իր ծուղրուղուն, բարելուան իր առաջին,  
Վոչ մի աքլոր չի կանչելու ծուղրուղու,  
Դա որենք ե ծանոթ ամեն ականջին:

Իմ անունից զրմզրմում ե սար ու ձոր,  
Դողդողում ե ամեն անցնող ձիավոր,  
Որորոցից Ջմգմ անունն ինձ տվին,  
Յես մեր գլուղում թագավորից թագավոր:

Ո՞ւմ կատուն ե վեր բարձրանում մինչ կատար,  
Ասողբրի հետ կռիվ անում ու կատակ,  
Ո՞ւմ վոչխարն ե ամպերի մեջ փաթաթված,  
Հարյուրներով վորոճում են սարի տակ:

Ծնտեղ նայեք, են ձև կոմբե ե բառաչում,  
Ձորի միջին ձև նախիրն ե արածում,  
Ո՞ւմ արտերն են դեռ գարունը չբացված  
Մարի լանջին սևանում ու կանաչում:

Իմ շնորհի ձայնը Վանքից ել անցավ,  
Ջաղցիս ջուրը, գնալով հա՛ շատացավ,  
Բայց իմ հոգին մորմորում ե մի մեծ վիշտ,  
Յեվ իմ սիրտը ալեկոծում մի մեծ ցավ:

Մտածում եմ Գայլասարն ե անասան,  
Իսկ իմ կյանքի մահվան արծիվը հասավ,  
Միտք եմ անում, վոր հավերս գնացին,  
Բայց դեռ յերբեք Գայլասարին չհասան:

Իմ շնորհը շղթաներում քարացան,  
Կատուներս սերունդ-սերունդ ծերացան,  
Վոչխարներս հաղարներով գնացին  
Վոչ մի վոչխար Գայլասարից չղարձավ:

Յեվ միտք արի, ե միտք արի յես յերկար,  
Վերջը գտա մի փրկություն, գտա ձար,  
Յես ուզում եմ այսորվանից այդ հսկա  
Գայլասարը դարձնել հողին հավասար:

Գայլի ձագը այսոր ձագ ե, վաղը գայլ,  
Ամեն մի ձագ գայլ ե դառնում քայլերալ,  
Յեթե բոլոր ձագերին մենք ցած բերենք  
Գայլասարում ել չի լինի վոչ մի գայլ:

Գայլերն հիմա դուրս են յեկել բներից,  
Ով այնտեղից մի գայլաձագ ինձ բերի,  
Ով սար գնա, մի հավ կտամ յես նրան,  
Մի գառ կտամ յես իմ սիրուն դառներից:

Կտամ սիրուն արագաղներ փետրավոր,  
Յեվ կատուներ շերտավոր ու շերտավոր,  
Ձեզ թան կտամ, կճուճներով, փարչերով,  
Կրակ կտամ ձմռան ցրտին ամեն օր:

Չմղմ աղեն իր հարսներին ձայն տվեց,  
Հինգ արագաղ շարտվեցին ողի մեջ:  
— Բարի ձամբա, — ե նույն օրը կեսօրին  
Մանուկները սարարչավը սկսվեց:

Կանչեց տղին քաջատուր,  
— Նստեղ արի, Յաչատուր:  
Մանուկները գնացին,  
Փափախդ դիր, հեծիր ձին:

Քչի՛ր նրանց մինչև սար,  
Չբարձրանաս գայլասար:  
Սարի տակին սպասիր,  
Ես ճիպոտն ել ձեռքիդ առ:

5

Իրար բռնած քարեքար,  
Բարձրանում են շարեշար,  
Մանուկները մեր գյուղի  
Ո՛ւր են գնում — Գայլասար:

Վոչ աղբյուր կա ե վոչ ծառ,  
Մի վիթխարի քարաժայռ,  
Մի ահավոր քարասար  
Ամպերի հետ հավասար:

— Նստեղ արի Բաղդասար,  
— Նստեղ արի Մանասար,  
Ձայն են տալիս ու կանչում  
Բարձրանում են Գայլասար:

Ու ցրվում են մեր անտուն  
Մանուկները բնից բուն,  
Գայլասարում չի յեղել  
Վոչ մի արծիվ, վոչ մի շուն:

Մե ժայռերը տաքացած  
Կռացել են վերից ցած,  
— Յես մտնում եմ, Բաղդասար,  
Իսկ դու եստեղ դռան կաց:

Ի՞նչ աչքեր են ցուում վառ,  
Զվախենաւ Մանասար,  
Ո, Գայլասար, Գայլասար,  
Վորքան գայլ կա, վորքան գայլ:

— Բռնիր, Բաղդիկ, ես ձագին,  
Բերանը, տես, պինդ փակիր,  
Դուրս ե նետում Մանիկը  
Մի գայլաձագ ահազին:

Մանուկները  
Ձայն են տալիս,  
Ցած են իջնում  
Գայլասարից:

Ամեն մեկը  
Բռնած մի ձագ,  
Աչքերը բաց,  
Բերանը փակ:

Գայլասարից  
Գյուղը մինչև  
Աղաղակ է,  
Կանչ է, ճիչ է:

Սաչատուրը  
Ձափ է տալիս,  
Զիռուն նստած  
Գնում գալիս:

— Դէ, շուտ հասեր,  
Հէյ սիլ մնաց,  
Ենպես դարկեմ  
Ուշքը դնա:

Ճանապարհը  
Մանուկ ու ձագ  
— Հէյ Բաղդասար  
Հարսյ հասանք:

Գայլասարն են  
Սրբած բերում,  
Ձագ չեն թողել  
Նլ բներու մ:

Գյուղում յեղով  
Յերբ յերեկո,  
Բակը լցվեց  
Գայլաձագով:

Ձագմ աղեն  
Յելավ վոտքի,  
Հավաքվեցին  
Հարսներ ու կին:

Ծները դիւ  
Կլանչեցին,  
Ձանգակները  
Դողան ջեցին:

Կատուները  
Մլավեցին,  
Բոլորն յեկան  
Հավաքվեցին:

— Լսեք, — առաց  
Զմդմ աղեն, —  
Գայլերը ինձ  
Շատ են նեղել:

Բայց յես հիմա  
Գտա ճարը,  
Պետք է քանդեմ  
Գայլասարը:

— Ես մի հավը  
Քեզ Բաղդասար,  
Ես աքլորը  
Քեզ Սանասար:

Հէյ, ժիր հարսներ,  
Ներս վաղեցեք  
Թաւ-թաւ կրակ  
Թո՛նրից հանեք:

Հուր բաժանեք  
Ես յերեխոց,  
Ամեն մեկին  
Տվեք մի ըոց:

Ամեն մեկին  
Մի լոշ, մի հաց,  
Մանուկներ են  
Սարից յեկած:

Ապրեք վորդիք,  
Դե՛, տաքացեք,  
Իմ կրակով  
Ուրախացեք:

Վաղը նորեց  
Սար գնացեք,  
Ինչքան բուն կա  
Ավերեցեք:

Գայլի ճագը  
Գայլ է դաճնում,  
Դա որենք է  
Սաղ աշխարհքում:

6

Առավոտյան շարեշար  
Նորեց ընկան ճանապարհ,  
Մանուկները մեր գյուղի  
Ո՞ւր են գնում — Գայլասար:

Սարեր, ձորեր մթնեցին,  
Նրանք ենտեղ մնացին.  
Ել չդարձան գյուղ յերբեք,  
Են գնալն էր, գնացի՛ն...

7

Ես ինչ մարդ ե, ինչ հովիվ,  
Գյուղ ե իջել ես հովին,  
Ուսին մի փոստ, մի մախախ,  
Մի ցուպ զրած էր թեվին:

— Զմդմ աղա, անիրավ,  
Ես բոլորը սվ արավ,  
Ծարավ կուժս սվ փշրեց,  
Իմ աքլորը սվ տարավ:

Ո՞ւր ե Մանեն, ով հրեց  
Նրան վառվող թոնրի մեջ,  
Ո՞ւր են յերկու գառնարած  
Մանուկներս վորք ու խեղճ:

Պահանջում եմ բեր ինձ տուր.  
— Հանգիստ խոսիր Ասատուր.  
Ջուր ես ուզում, ջուր կտանք,  
Աղջի, հովվին թասով ջուր...

Ջուր չեմ ուզում, կուծս տուր.  
Մանուկներս ո՞ւր են, ո՞ւր  
Ո՞ւր ե Մանեն մոխրաթափ,  
Վոչ կուժ թողիք ե վոչ դուռ:

— Ա՛յ մարդ, ինչ ես տաքացած  
Բախ մտել բարձրաձայն,  
Ուրախ յեղիք, վոր Մանեն  
Իմ թոնրի մեջ մահացավ:

Ինքն իրեն ե ցած ընկել,  
Հետն ել պղինձս ե ընկել,  
Ա՛յ, թաղել եմ աղբրի մոտ  
Վրեն ել ճյուղք եմ տնկել:

Կլանաչի, թուփ կտա,  
Զմզմ աղից հեղատակ.  
Վո՞ր աղեն ե իր քոժին  
Թաղում իր տան պատի տակ:

Ես մոխիրն ել, նայիր, տես,  
Մոխիր հո չե, վոսկու դեղ,  
Նա յե թափել քթոցով,  
Թե ուզում ես կտամ քեզ:

Իսկ քո տունը հասարակ  
Յես կդարձնեմ ինձ մարագ,  
Հարդս դուրս ե մնացել,  
Գյուղում յեղա խայտառակ:

Ան՛ քեզ մարագ, մոռ քեզ ջուր...  
— Եստեղ արի Պաշատուր,  
Հարայ գցիր բակի մեջ,  
Մեր շներին քըսքըս տուր:

Վազիր, վազիր Ասատուր,  
Յեվ քսան շուն դոնեդուռ,  
Յերեկոյան ջինջ հովին,  
Մեջտեղ առած մի հովիվ:

Հովվի ուսին են թռչում,  
Բարձրանում են ցած խնում,  
Քաշում մեջքից, գոտիկից,  
— Ոգնեք, հովիվ ու դրկից...

Ո՞վ կա սակայն, եդ սարում  
Քրտինք մտած ու արյուն,  
Շքջում ե նա վիթխարի  
Գայլասարի կատարին:

Հեյ, հե՛յ, Ասո, յետ նայիր,  
Ո՞վ ե կանգնել տանիքիդ,  
Պաշատուրը հե՛յ, հրեն  
Հարդ ե թափում յերթիկից:

Տունդ մարագ դարձրին,  
Ո՞ւր ես ընկել քարեքար,  
Ու շքջում ե մեն մենակ  
Հովիվ Ասոն խելագար:

— Եստեղ արի Բաղդասար,  
Եստեղ արի Մանասար,  
Յեկեք, յեկեք գնանք տուն,  
Իրեկուն ե, իրեկուն...

Սպասում ե ձեզ նանին,  
Ես մուտք մուտքին, ես ժամին.  
Հեկեկում ե լոկ քամին,  
Հեկեկում ե ու լալիս.

«Մենք ցախ չունենք, չունենք տուն,  
Յերթիկ չունենք, չունենք դուռ,  
Կրակ չունենք, չունենք ջուր,  
Նանի, նանի՛ հւր ես, հւր:

Մըսում ենք մենք, տուն արի,  
Վոչ հաց ունենք, վոչ պանիր.  
Մոխրները հանիր վեր,  
Աղի թոնրից կրակ բեր:

Թասը դրկենք տաքանանք,  
Ձմրան ցրտին չմնանք,  
Հեքյաթ ասիր, լսենք մենք,  
Հեքյաթ ասիր, վոր քնենք...»

8

— Գասպար, Գասպար, դուրս յեկ, դուրս,  
Աղեն քշեց ինձ գյուղից,  
Տունս մարազ դարձրեց,  
Հարդ ե թափում յերթիկից:

Մահակդ առ, դուրս արի,  
Գյուղը մտնենք ես հովին,  
Գասպար, Գասպար, ոգնիր ինձ,  
Դու նախորդ ես, յես հովիվ:

130

Մանուկները գնացին,  
Գնացին ու չդարձան,  
Մանեն վառվեց թոնրի մեջ,  
Գասպար, տուր ինձ հրացան:

Պաշոյի մոտ յեկ գնանք  
Ջուրը կտրենք ջաղաղի,  
Ո՞ւմ համար ես աշխատում  
Պեղճ ու կրակ գյուղացի:

Դուրս ե թոչում մահակով  
Իր թագու հետ նախընդհան,  
Ինքն ե մենակ, մի մահակ,  
Մի թագի ու մի խուրջին:

Վոչինչ չունի, ել վոչինչ  
Ես անսահման աշխարհքում,  
Պուկ ե գալիս խեղճ թագին  
Դեպի դաշտեր, դեպի գյուղ...

9

— Պաշո, Պաշո, դուրս արի,  
Ասոն, Բյասոն ես կանչում,  
Բույրդ վառվեց թոնրի մեջ,  
Յեկ, վրեժ ենք պահանջում:

Ջուրը կտրիր, ջաղացպան,  
Աղեն քշեց ինձ գյուղից,  
Տունս մարազ դարձրեց,  
Հարդ ե թափում յերթիկից:

Դուն ես ծեծում ջաղացի,  
Տալիս հարված հարվածին,  
— Ո՞ւմ համար ես աշխատում  
Պեղճ ու կրակ գյուղացի:

131

— Կանգ առ, կանգ առ, ջաղացքար՝  
Դետանկ, գետանկ, մի վաղիր.  
Դուրս ե գալիս ծեր Պաչոն  
Բահը դրած իր ուսին:

Ջաղացքարը թավալվում,  
Թավալվում ե և դանդաղ,  
Կանգ ե առնում ջաղացում  
Յեկ գոռգոռոց, և՛ չախչախ...

Պաչոն հենված թիակին,  
Ասոն հենված իր ցուպին,  
Գասպարն իրա մահակին  
Սպասում են տանիքին:

Ջուրն են կտրել ջաղացի,  
Յերեք չարքաշ գյուղացի,  
Դանակներով, պարանով,  
Ճամբա ընկան գնացին:

10

Ահա և աղի տանիքը,  
Ահա և աղի յերթիկը,  
Ահա և աղի բարձերը,  
Ահա և աղեն, նա՛ ինքը!

Լսվում ե հարսների շունչը,  
Շնչում ե աղի կնիկը,  
Վերմահներն յելնում իջնում են,  
Կարծես շնչում ե տանիքն ել...

Յերևում են գյուղի դաշտերը,  
Յերևում ե սարը վիթխարի,  
Յոլում ե աստղերի լույսը  
Հարսների կրծքի մարմարին:

132

Շները Վանք են գնացել,  
Գասպարի թագու յետևից,  
Լսվում ե նրանց հաջողը,  
Կալիբից, հեռու դաշտերից:

Յեկ յերեք հսկա սովերներ  
Շարժվում են աղի յերթիկին,  
Յերթիկից մերթ-մերթ պոկվում ու.  
Պաղում են հարսների կրծքին:

— Հեյ, Պաչատճեր, ողնությո՞ւն,  
Քարձիս վրա մարդ ընկավ.  
Իրարանցում տան միջին,  
Յած են թափվում թառ ու հավ:

— Ջաղացպանն ե, նայիր, տես,  
Ջեռքին բռնած մի դասակ,  
Ալրաթաթախ, մրոտած,  
Կարծես լինի սատանա:

— Ո՞ւր ես յեկել ես ժամին,  
Քեդ յերթիկից սվ կախեց,  
Գայլեր մտան ջրաղաց,  
Դուրս ես փախել դու վախից:

— Ջուրն եմ կտրել ջաղացիդ,  
Սլ քո աղուն չեմ աղա,—  
— Հե՛յ, գարկեց ինձ, ողնությո՞ւն,  
Աղաղակում ե աղան:

Վազվզում են հարսները  
Հերարձակ ու կրծքաբաց,  
— Ջաղացպանն ե, ջաղացպան,  
Շնչում են սարսափած:

133

Յած ե ընկնում մի դանակ,  
Արնաշաղաղ մի ծեր ձևաք,  
— Զաղցիս ջուրը կտրեցիր,  
Յերբ կտրեցիր, ասա յերբ:

Հարսները լուռ մոտենում  
Փսիսում են դարմացած,  
— Ասա, քեզ ո՞վ յերթիկից  
Կես գիշերին կախեց ցած:

11

«Յես հովիվն եմ Զմզմ աղի, կարոտ աղի, կարոտ աղի,  
Յես հովիվն եմ Զմզմ աղի, կարոտ մաղի, կարոտ մաղի,  
Աշխարհ յեկա, ասացին թե, — վերկաց քաղիլը, վերկաց քաղիլը,  
Մանգաղ չկար, յես մտացի առանց քաղիլ, առանց քաղիլ:

Ո՞վ կարող ե անցնել Զմզմ աղի թաղից, աղի թաղից,  
Ո՞վ կարող ե վերցնել Զմզմ աղի ցախից, աղի ցախից,  
Վոչինչ չունեմ բացի ցուպից ու մախախից, ու մախախից,  
Աշխարհն ամեն մենք թողեցինք Զմզմ աղին, Զմզմ աղին:

Կախված ե նա ծծմի նման առատաղից, առատաղից,  
Մծմում ենք մենք ու տալիս ենք Զմզմ աղին, Զմզմ աղին,  
Աղեն ուտի իսկ մեզ մնա թեփ ու թաղիք, թեփ ու թաղիք,  
Աղեն հագնի, իսկ մեզ վրա անձրև մաղի, անձրև մաղի...

Կրակ կանեմ յեկե՞ք գալիք, յերեք խաղի, յերեք խաղի,  
Սարը ձերն ե, իսկ մեր գյուղը Զմզմ աղին, Զմզմ աղին,  
Գայլասարում ման եմ գալիս ամպ ու շաղին, ամպ ու շաղին,  
Յես տուն չունեմ, աղեն քշեց ինձ մեր գյուղից, ինձ մեր գյուղից:

Ախ, յերբ կլինի հովիվ մարդուն հող ու նախիր, հող ու նախիր,  
Հովիվ մարդիկ մանգաղ-մանգաղ երթան քաղի, երթան քաղի,  
Արե զարկի մեր գերանդուն, մեր մանգաղին, մեր մանգաղին,  
Արև զարկի մեր դռներին, մեր փակաղին, մեր փակաղին:

134

Մուխ բարձրանա հովիվ մարդու առատաղից, առատաղից,  
Այլուր թափի հովիվ մարդու շըխշըխ մաղից, շըխշըխ մաղից,  
Մեջտեղ առնենք հովիվներս Զմզմ աղին, Զմզմ աղին,  
Գշենք նրան մեր դռներից ու մեր թաղից, ու մեր թաղից:

Ամեն մի մարդ հանգիստ գնա իրա ցախին, իրա ցախին,  
Ամեն մի մարդ դուրս գա գյուղից շամանդաղին, շամանդաղին,  
Ամեն մի մարդ գյուղը մտնի առանց վախի, ախու՜վախի,  
Գյուղը մնա հովիվ մարդկանց ու հոտաղին ու հոտաղին:

Հովիվ մարդիկ թասը իրար թասի զարկեն, թասի զարկեն,  
Մի տեղ նստեն, ախպոր նման իրար հարգեն, իրար հարգեն,  
Ախպոր նման իրար գրկեն, անուշ յերգեն, անուշ յերգեն,  
Ախպոր նման մի հարկի տակ հանգիստ պառկեն, հանգիստ պառկեն:

135

## ԳՂՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

Ի մ մանկության մութ հուշեր,  
Ո՞վ արդյոք ձեզ ինձ հուշեց,  
Ձեզ իմ սերը, թե յերգիս  
Հողմը բերեց այս գիշեր:

Վերկաց, վերկաց Բաղդասար,  
Վերկաց գնանք Գայլասար,  
Ձայն հիմ տալիս ահա յես,  
Իմ սիրելի Սանասար:

Կանչում ե ձեզ իմ գերի,  
Արձագանքը յերգերիս,  
Իմ յերգերից թափվում են  
Արցունքներ իմ ձեռքերին:

Ո՞ւր մնացիք, ո՞ւր անցաք,  
Ինչո՞ւ սարից չդարձաք,  
Գուցե անդամք գնացիք,  
Գուցե դուք ինձ մոռացաք:

Յեկեք ընկենք ճանապարհ,  
Նորից լինենք քարեքար,  
Թե-թեխ տանք, ուս ուսի,  
Բաղդասար ու Սանասար:

Կար մի բարձր, շատ մի բարձր, բարձր սար,  
Ննքան գայլ կար, վոր կոչվում եր Գայլասար.  
Կանգնած եր նա ահարկու և անսասան,  
Ամպերի մեջ, ամպերի հետ հավասար:

Գայլաբուն կար յուրաքանչյուր քարի տակ,  
Ամեն բնում քանի գայլ ու քանի ձագ,  
Ամեն բունը սև կոճղի պես փայլվում,  
Պսպղում եր հեռվից, վորպես քարանձավ:

Ով բարձրացավ, նա այդ սարում ել մնաց,  
Ով ել անցավ, են գնալն եր, վոր գնաց,  
Վոչ մի ճամբորդ յետ չդարձավ եղ սարից,  
Վոչ մի անցորդ բարձրանալիս չիջավ ցած...

Ո, վիթխարի, ո, ահարկու Գայլասար,  
Գիտեք ինչքան, ինչքան գայլ կար, ինչքան գայլ.  
Դունչը կաթին, թաթը դրած մոր թաթին,  
Ամեն մի ձագ գայլ եր դարձել քայլեքայլ...

Յեկավ մի որ մի սրընթաց Ձիավոր,  
Գայլասարի կատարներից հեռավոր.  
Ձին փռնչում, ծառս եր լինում կատաղի,  
Դեմը սարն եր, վիթխարի ու ահավոր:

— Ով կանգնած ե, թող բարձրանա իր թամբին,  
Ով թամբին ե, թող միանա մեր ճամբրին,  
Սարը մեծ ե, գայլերը շատ, բայց չկա,  
Դեռ վոչ մի սար, վոր դիմանա մեր թափին:

Ձիավորը վերև նայեց, ձորափին,  
Տեսավ Ասոն սուլում եր մի քարափի,  
Գասպարը լուռ հենվել եր իր մահակին,  
Պաշտն տխուր միտք եր անում տանիքին:

Գյուղից հեռու քրչված յերեք գյուղացի,  
Մի ջաղացպան, վոր աջ ուսին թե չունի,  
Յեզ մի հովիվ, մի այծամորթ իր ուսին,  
Յեզ մի անտուն, խեղճ ու կրակ նախընչի:

«Ով հովիվ ե, ունի միայն մի մախախ,  
«Ով նախըրորդ ե, տանը չունի հաց և աղ,  
«Ով հոտաղ ե, վոչ քաղ ունի և վոչ ցախ,  
«Ով մաճկալ ե, վար ե անում շաղից շաղ:

«Ով շարժում ե և՛ դերանդի, և՛ մանգաղ,  
«Բայց հաց չունի, հաց ե մուրճում թաղեթաղ,  
«Ով աշխատում և նստում ե գլխակախ,  
«Մեռնելիս ել չունի անդամ մի դագաղ:

«Ով տուն չունի այս աշխարհում ընդարձակ,  
«Ով քուն չունի, չունի յերթիկ, չունի փակի,  
«Բաղդ ե փնտրում քարափնտրում ծագեծագ,  
«Ով բարձ չունի, քար ե գնում գլխի տակ:

«Ոոստանում եմ ձեզ աղբյուրներ լուսաջուր,  
«Ոոստանում եմ յես ձեզ տներ, շեմք ու դուռ,  
«Ոոստանում եմ ձեզ յերթիկներ ու կտուր,  
«Ոոստանում եմ ձեզ կրակներ հրահուր:

«Ոոստանում եմ ձեզ թոնիրներ բոցավառ,  
«Ոոստանում եմ ձեզ նախիրներ, հերկ ու վար,  
«Ոոստանում եմ ապարանքներ ձեզ մարմար,  
«Ոոստանում եմ ձեզ սլալատներ սյունաշար:

«Ոոստանում եմ ձեզ քոշկեր ու սարաներ,  
«Ուր աղբիլ են աղաներ ու արքաներ,  
«Ոոստանում եմ խրճիթներից ձեզ հանել,  
«Առաջնորդել ու հարկից հարկ ձեզ տանել:

«Ոոստանում եմ հողը լինի սեփական,  
«Ոոստանում եմ յես ձեզ ամբողջ ապագան,  
«Ոոստանում եմ, վոր ձեր գյուղում պապական,  
«Հովիվ մարդը լինի գյուղի նախագահ:

«Ոոստանում եմ ինչ հոր դատարկ ե լցվի,  
«Ինչ դուռ փակ ե, յետ-յետ գնա ու բացվի,  
«Ոոստանում եմ հովիվ մարդը բարձրանա,  
«Արքաների սլալատի մեջ լվացվի:

«Ոոստանում եմ ձեզ հազարան բլրուխներ,  
«Ոոստանում եմ հեքյաթական սանդուխքներ,  
«Ուր ծուխ չկար, խոստանում եմ լույս ու բոց,  
«Ուր գերք չկար, խոստանում եմ մի դպրոց:

«Ոոստանում եմ ուր անգամ խոտ չի աճի,  
«Այնտեղ շույլ մարգագետին կանաչի,  
«Ոոստանում եմ, ով հորթ չունի՝ կովեր տալ,  
«Ով կալ չունի, խոստանում եմ մի աշխարհ:

«Ոոստանում եմ գյուղը մեա հոտաղին,  
«Ամեն մի մարդ հանդիստ գնա իր ցախին,  
«Ամեն մի մարդ տերը դառնա իր քաղին,  
«Արևը զարկի մաճկալ մարդու մանգաղին:

«Արևը զարկի ձեր դռներին, ձեր թաղին,  
«Ասատուրը դատի կանչի իր աղին,  
«Պաշտն դառնա տերը աղի չախչախին,  
«Արևը զարկի խեղճ Գասպարի փակաղին:

«Իմ յետևից Առաջնորդ ե գալիս մեծ,  
«Նա, վոր գիտի ձեր աշխարհը հողմածեծ,  
«Նա, վոր գիտի ձեր լեռները բարձրաբերձ,  
«Նա, վոր մեծ ե և հավիտյան կլինի մեծ:

«Նրա որոք խինդ կլինի և գինի,  
«Յե՛վ տոնածառ մաճկալ մարդու սեղանին.  
«Հերկ կլինի, յերգ կլինի ու գարուն,  
«Անծայրածիր բերք կլինի աշխարհում:

«Յեկեք միայն ձեր թամբերին նստեցեք,  
«Յեկեք միայն սրեր առեք, ձի հեծեք,  
«Յեկեք արձակ դաշտերից ու սարերից,  
«Յեկեք մթին անդնդախոր ձորերից:

«Յեկեք ես մեծ Գայլասարը բարձրանանք,  
«Սոււմբ-խոււմբ յեկեք, յեկեք բանակ առ բանակ,  
«Յեկեք ինձ հետ դեպի կռիվ ընթանանք,  
«Գոչում եմ ձեզ դեպի վերջին հաղթանակ:

— Պաշն, Գասպար, հե՛յ Գասպար,  
Մեզ և կանչում սարից սար,  
Ձիավորը փրկարար,  
— Մնաս բարձր Գայլասար:

2

Ինչ աչքեր են ցուում վառ,  
Սուրդ պարզեր, շնուտ, Գասպար.  
— Ձմզմ աղա, դուրս արի,  
Ձիուս հսկիր, Սանասար:

Գայլաձագ և, քաշիր դուրս,  
Մի խնայիր Ասատուր,  
Ո՛ւր ես քշվում ժայռի տակ,  
— Հե՛յ, դուրս արի, Պաշատուր:

Գայլի ձագը  
Գայլ և դառնում,  
Դա որենք և  
Սաղ աշխարհում:

140

Ամեն մեկը  
Բռնած մի ձագ,  
Աչքերը բաց  
Բերանը փակ,

Ցաց են իջնում  
Գայլասարից,  
Գայլասարն է  
Փլչում դալիս:

Ձագեր փախան  
Ճանապարհից,  
Գայլեր փախան  
Գայլասարից:

Չորը լցվեց  
Գայլաձագով,  
Յե՛վ աչքերով  
Փայլատակող:

Ձիավորը  
Կանգնեցրեց ձին,  
Ձեռքը դարկեց  
Ձիու սանձին:

Մտը պարզեց  
Դեպի կատար,  
Մաքն այդ անկող  
Ու միգատար:

— Ափից ափ մենք  
Արշավեցինք,  
Գայլասարը  
Գրավեցինք:

141

Սարը մերն է,  
Բեղուն, բերրի,  
Բայց ցած չիջնեք  
Ձեր թամբերից:

Ինչ խոստացա  
Նա կլինի,  
Արքա, աղա,  
Ո՞հն չի լինի:

Աստղանդակեք  
Հառնջ, հառնջ,  
Ասեց է իր  
Թամբին մեռավ:

## ԳՂՈՒՅ ԶՈՐՐՈՐԴ

1

Ղու, դու, դու,  
Առավոտ շուտ մեր գյուղում  
Ո՞վ է կանչում ծուղրուղու,  
— Սանասարի արջո՞րն է:

Ես ի՞նչ գետ է թափ ընկնում,  
Ես ի՞նչ յերգ է չափ ընկնում,  
Ես ի՞նչ աղունն են աղում,  
— Կոլլեկտիվի աղունն է:

«Պատվիր հայ, ջրադաց,  
Կոլլեկտիվի ջրադաց,  
Գիշերն իջավ սարի տակ,  
Բարի լույս քեզ արեզակ:

Մնացել է ինձ մի ձեռք,  
Մնացել է մեն մի յերգ,  
Պատվիր հայ ջրադացբար,  
Գայլասարն է, Գայլասար:

Ունեցա յես տեղ ու տուն,  
Բայց դու իջար ծերություն,  
Կյանքս ել փոքրիկ մի ջրադաց,  
Վերջին աղունս աղամ...

Սարը մերն է,  
Բեղուն, բերրի,  
Բայց ցած չիջնեք  
Ձեր Թամբերից:

Ինչ խոտացա  
Նա կլինի,  
Արքա, աղա,  
Պան չի լինի:

Աստանդակեք  
Հառնջ, հառնջ,  
Ասեց և իբր  
Թամբին մեռավ:

## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

1

Ղու, դու, դ՛ն  
Առավոտ շուտ մեր գյուղում  
Ո՞վ է կանչում ծուղրուղու,  
— Սանասարի աքլորն է:

Ես ի՞նչ գետ է թափ ընկնում,  
Ես ի՞նչ յերգ է չափ ընկնում,  
Ես ի՞նչ աղունն են աղում,  
— Կոլլեկտիվի աղունն է:

«Պտտվիր հայ, ջրաղաց,  
Կոլլեկտիվի ջրաղաց,  
Գիշերն իջավ սարի տակ,  
Բարի լույս քեզ արեգակ:

Մնացել է ինձ մի ձեռք,  
Մնացել է մեն մի յերգ,  
Պտտվիր հայ ջրաղացքար,  
Գայլասարն է, Գայլասար:

Ունեցա յես տեղ ու տուն,  
Բայց դու իջար ծերութունն.  
Կյանքս ել փոքրիկ մի ջրաղաց,  
Չկերջին աղունս աղամ...

Մնացել ե մեն մի պարկի,  
Ե՛յ, ջաղացքար, ե՛յ աշխարհք,  
Ինչ աղուն կար աղացի,  
Վերջին որն ե ջաղացիս...

Կյանքը դարձավ եսքան լույս,  
Արշալույս ե, արշալույս,  
Մուխին մտա յեռ ջաղաց,  
Լույսին դուրս եմ գնում, դուրս...

Գիշերն իջավ սարի տակ,  
Բարի լույս քեզ արեգակ,  
Հնյ, պտտվիր իմ ջաղաց,  
Վերջին աղունս աղամ...

Մյառ՛ւ, մյառ՛ւ,  
Ո՛ւմ կատուն ե մլավում,  
Ո՛ւմ կատուն ե արշավում,  
— Բաղդասարի կատուն ե:

Հնֆ, հնֆ, հնֆ,  
Ես ո՛ւմ շներն են հաջում,  
Քարձը, բարձը կլանչում,  
— Կոլլեկտիվի շներն են:

Ես ո՛ւմ կովն ե շառաչուն,  
Գետի միջին բառաչում,  
Ո՛ւմ նախիրն ե խմում ջուր,  
— Կոլլեկտիվի նախիրն ե:

Հեյ, հեյ, հե՛յ,  
Առավոտյան մութեմուխ  
Ո՞վ ե մտնում գյուղխորհուրդ,  
— Մեր նախրապահ Գասպարն ե:

Բանալիներն իր ձեռքում  
Ո՞վ ե քայլում դեպի տուն,  
Դեպի կոլխոզ վարչութուն.  
— Մանասարի հայրիկն ե:

Ուր վոչ բոց կար ե վոչ ծուխ,  
Վոչ կրակ կար, վոչ ածուխ,  
Վոչ խնոցի, վոչ մածուն,  
Վոչ թավա կար ե վոչ ձու.

Վոչ թոնիր կար ե վոչ ցախ,  
Վոչ շերեփ կար ե վոչ աղ,  
Վոչ ալյուր կար ե վոչ մաղ,  
Մերկութուն եր թաղեթաղ.

Վոչ գերանդի, վոչ մանգաղ,  
Վոչ հորովել ե վոչ քաղ,  
Վոչ կալերում յերգ ու խաղ,  
Լոկ հառաչ եր ու լոկ անխ.

Վոչ մառան կար, վոչ մաքաղ,  
Վոչ պանիր կար, վոչ կարագ,  
Վոչ գդալ կար, վոչ կարաս,  
Վոչ գինի կար ե վոչ թաս.

Մուխ ե յիլնում անդադար,  
Թոնիրներից բոցավառ,  
Ցերթիկներից անհամար,  
Դեպի յերկինք ու կամար:

Ամանները թե՛ բոցին  
Որորում են խնոցին,  
Քանի հարսներ, քանի կին,  
Քանի աղջիկ, տանտիկին:

Կաթ են կթում, յեռացնում,  
Քաֆն ու բուֆը հեռացնում,  
Տաքացնում ու հովացնում,  
Դատարկում են ու լցնում:

Ներս են մտնում, դուրս գալիս,  
Կարպետներ են թափ տալիս,  
Նոր շորեր են կախ տալիս,  
Նոր վերմակներ, նոր խալի:

Սարից նախիրն է գալիս,  
Սա ինչ գյուղ է ցնծալի,  
Սա ինչ որ է, ինչ գալիք,  
Մառանները լայն ու լիք:

Մանգաղներն են շողշողում,  
Արևի տակ փողփողում,  
Մաճկալ, նախորդ ու հովիվ,  
Գյուղն են մտնում զով հովին:

Գյուղ են մտնում խմբերով,  
Անցնում գյուղի բաղերով,  
Անցնում գյուղի թաղերով,  
Անցնում ուրախ խաղերով:

Անցնում շող ու շաղերով,  
Հին աշխարհը թաղելով,  
Գրկախառն ու գրկաբաց,  
Լուսաբացից լուսաբաց:

Բարի որ ձեզ, բարի լույս,  
Արշալույսից արշալույս,  
Վորքան, վորքան փոխվեցիք,  
Իմ տարաբաղդ գյուղացիք:

Հիմա բացեք դուք սեղան,  
Հիմա գինին թող տեղա,  
Հիմա յերգեք, վոր խաղան,  
Թող զրնգա նաղարան:

Լցրեք գինին, լցրեք թաս,  
Վեր բարձրացեք թասեթաս,  
Հասեհաս ե, հասեհաս,  
Վեր բարձրացեք դասեդաս:

Վողջուն, վողջուն յեղնող ծուխ,  
Վողջուն կրակ և ածուխ,  
Վողջուն թավա, վողջուն ձու,  
Վողջուն կարագ և մածուն:

Ձեր սեղանին խնդաօիրտ,  
Ձեր բերքին ու ձեր հասին,  
Յեկ ձեր գինու կարասին,  
Ձեր կենացին, ձեր թասին:

— Ձիավորի կենացը,  
Նա մեզ տվեց ես հացը,  
Ինչ խոստացավ, նա յեղավ,  
Մեզ տուն տվեց և սեղան:

— Առաջնորդի կենացը,  
Նա յե պահում ես հացը,  
Կտանք վերջին հարվածը,  
Ով մոտենա մեր հացին,

Ով մոտենա մեր բարձին,  
Ով մոտենա մեր բոցին,  
Ով մոտենա մեր հողին,  
Ով մոտենա մեր թաղին:

— Բարի ճամբա, Ասատու՛ւր,  
Քո կենացը, դե ծափ տուր,  
Հովիթն յեղավ նախագահ,  
Զմզմ աղեն ել չկա:

Շատ չճառես, չխոսես,  
Ինչ մոռացանք, դու կասես,  
Հանդիստ նստես ու լսես,  
Մեր կողմից մի խաղ ասես:

Ենպես ասես, վոր թնդա,  
Սող Կրեմլը գրնդա,  
Դու յես հիմա նախագահ,  
Դու յես տերն ու թաղակահա:

Մերն ե հողը պառական,  
Խրճիթները գյուղական,  
Մերն ե գյուղը սեփական,  
Մերն ե ներկան, ապագան:

Ու զարկում են թասի թասի,  
Հովիվ մարդիկ միասին,  
Քյաստն գյուղի նախագահ,  
Ասոն կոլխոզ վարչության:

Պաշտն նորից ջաղացական,  
Յերգ ե առում, հեյ, հապա,  
Որորվում ե իր յերգից,  
Նա, վոր կախվեց յերթիկից:

«Մնացել ե ինձ մի ձեռք,  
Մնացել ե մեն մի յերգ,  
Պատվիր հայ ջաղացքար,  
Գայլառարն ե, Գայլառար:

Ունեցա յես տեղ ու տուն,  
Բայց դու իջար ծերություն,  
Կյանքս ել փոքրիկ մի ջաղաց,  
Վերջին աղունս աղամ...

Մնացել ե մեն մի պարկի,  
Ե՛յ ջաղացքար, ե՛յ, աշխարհք,  
Ինչ աղուն կար աղացի,  
Վերջին որն ե ջաղացիս...

Կյանքը դարձավ ետքան լույս,  
Սրջալույս ե, արջալույս,  
Մութիւն մտա յես ջաղաց,  
Լույսին դուրս եմ գնում, դուրս...»:

Յեկ այտերից ծերացած  
Արցունքներ են թափվում ցած,  
Պնդություն ե և գինի  
Մաճկալ մարդու սեղանին:

Ասոն Մոսկով ե գնում,  
Պաշտն ինչպէս դարկի ծափ,  
Յերգե՛ր, յերգե՛ր և գինի,  
Յեկ արցունք ե թափվում ցած:

Լաությո՛ւն ե, լաությո՛ւն,  
Ես ի՞նչ բակ ե, ես ի՞նչ տուն,  
Վոչ կատու կա և վոչ շուն.  
— Զմզմ աղի բակն ե հին:

Լաությո՛ւն ե, լաությո՛ւն,  
Ի՞նչ յերթիկ ե առանց ծուխ,  
Վոչ կրակ կա, վոչ ածուխ.  
— Զմզմ աղի տունն ե հին:

Քսան յերթիկ, քսան դուռ,  
Քսան թոնիր կավակուռ,  
Բոլորը մտնի, հին ու լճու,  
Զմիմ աղա, սուր ես, սուր...

Մոխիր, մոխիր մնացած,  
Իսկ եղ մոխրի ղեղից ցած,  
Մի շիրիմ կա մոռացված,  
Վրեն մի ծառ կռացած:

Կանգ ե առնում նախադան,  
Մուլթն ե իջնում գյուղական,  
Կանգնած նայում ե յերկար,  
Դեմը մի հին շիրմաքար...

— Տես, նստել եմ յես քարիդ,  
Վեր կաց առ իմ բանալին,  
Վերկաց Մանե, դնա տուն,  
Կոլլեկտիվի վարչութուն:

Վերկաց դնա գյուղխորհուրդ,  
Գերեզմանում ցուրտ ե, ցուրտ,  
Թուղթ կզրեմ Գասպարին,  
Վառարանը կվառի:

Վերկաց դնա ջրաղաց,  
Վերկաց աղունդ աղա,  
Սպասում ե քեզ Պաշոն,  
Յերեկո յե, ջինջ, խաղաղ:

Սպասում եմ զով ու հով,  
Աստղերն իրենց յերկնքով,  
Յեկ, ջրերը կարկաչուն,  
Մաղիկներն են քեզ կանչում:

Կռանում ե գլխարաց,  
Յերկու արցունք ընկան ցած.  
— Զմիմ աղեն ել չկա,  
Տես, գնում եմ Մոսկվա:

Ի՞նչ ես ուզում քեզ բերեմ,  
Առն, յես սում բարեկեմ,  
Վերկաց դիր ինձ ճանապարհ,  
Ի՞նչ ես քնել դարեդար:

Մանե, Մանե, ինձ գթա,  
Վեր կաց թխիր ինձ գաթա,  
Քայլի՛ր ինձ գյուղից դուրս,  
Վերջալույս ե, վերջալույս...

4

— Հայրի՛կ, հայրի՛կ, սուր կերթաս,  
Մե՛զ ել, մե՛զ ել հետդ տար,  
Փարվում են հոր ուսերից,  
Յեվ թեքից անդադար:

Տարայ, նանայ հե՛յ նանի,  
Պար ե գալիս գիժ Մանին,  
Խելազար ե, խելազար,  
— Հայրի՛կ, հայրի՛կ, մեզ ել տար:

Բռնել ենք, տես, շուրջդ պար,  
Ել չենք դնա Գայլասար,  
Հայրի՛կ, մեզ առ շալակիդ,  
Մեզ ել, մեզ ել Մոսկով տար:

Կռանում ե, վոր բռնի,  
Դրկի նրանց վեր առնի,  
Բայց ցնդում են, չքանում,  
Յետ են դառնում, ձայն հանում:

Յետ են դառնում ու հանգչում,  
Յետ են դառնում ու կանչում,  
— Հայրի՛կ, հայրի՛կ մեզ ել տար,  
Ասա, վոր մեզ շուն չկար:

Տարսյ, նանս, հե՛յ նանի,  
Պար ե գալիս գիժ Մանին,  
— Ասա, վոր մեզ տուն չկար,  
Հավ ու հավաբուն չկար...

Կանգ ե առնում նախագան,  
Կռանում ե, վոր գրկի,  
Դարձյալ ցնդում են, չկան,  
Դուրս են թռչում իր գրկից:

Տեսե՛ք, տեսե՛ք գիժ Մանին  
Պեչիբրկաթ ե քարջ տալիս,  
Տարսյ, նանսյ, հե՛յ նանի,  
Յերգ են ասում, պար գալիս:

Մանուկներ են ե մի կին,  
Պար են բռնել բախում հին,  
Մոխրագեղն են ցրում, տե՛ս,  
Ինչ փոշի՛յե, ինչ հանդե՛ս:

Չքանում ե սակայն այդ  
Մանուկները պարն արագ,  
Յե՛վ մնում ե կտրի տակ  
Մի գյուղական ցուցանակ:

Շնասեղ ապրել ե, լսե՛ք,  
Ջմգմ աղեն ու անցել,  
Նրանից ես աղբյուրն ու  
Ես սարահն ե մնացել:

Պահում ենք, վոր իմանան  
Սերունդները հետագա,  
Գրեց աղի հովիվը,  
Գյուղի նախկին նախագան...»:

Լուռ նայում ե նախագան,  
Հիշում են հի՛ն, ինչ վոր բան,  
Չորում ե Ջրմաղբյուրին,  
Շուրթը խփում պաղ ջրին:

Ջուր ե խմում, հագնում,  
Ջրմաղբյուրից վեր կենում,  
Նորից կանգնում, միտք անում,  
Ճամբա րնկնում ու գնում:

— Հողը դարձավ սեփական,  
Մերն ե ներկան, աղագան,  
Մերն ե գյուղը պապական.  
Շտապում ե նախագան:

## ՔԼՈՒԾ ՀԻՆԳԵՐՈՐԳ

1

Կրեմլի մեծ դահլիճում  
Ասոն ո՞ւմ չի ճանաչում,  
Ասոն ո՞ւմ չի բարեկամ,  
Ասոն ո՞ւմ չի հարեանտ

Հովիվներ են, հոտաղներ,  
Նախրապահներ, կթողներ,  
Գոմապահներ, մաքրողներ,  
Նախագահներ, մաճկալներ:

Բոլորն յեկած գյուղերից,  
Համայնական հողերից,  
Անդնդախոր ձորերից,  
Գայլասարի կողերից:

Սմեն մեկն իր գլխարկով,  
Յմեն մեկն իր տարազով,  
Բայց միևնույն մտքերով,  
Բայց միևնույն յերազով:

Հավաքվել են շառաչուն  
Կրեմլի մեծ դահլիճում,  
Վորպես մի մեծ ընտանիք,  
Վորպես մի դուռ, մի տանիք:

154

Հավաքվել են ժողովի,  
Նախրապահներ ու հովիվ,  
Ով խի՛լ չունենք աշխարհում,  
Բացի հողմից ու հովից:

Տե՛ս, ժպտում ե պատից վար  
Ձիավորն այն փրկարար,  
Նա, վոք բոլոր սովահար,  
Հովիվներին ցրտատար,

Առաջնորդեց պալատներ,  
Յեվ դահլիճներ սյունաշար.  
— Յեկե՛ք, — սասց, — հովիվներ,  
Նախրապահներ ու մաճկալ:

Արևմուտքից, արևմուտք,  
Յեվ հյուսիսից մինչ հարավ,  
Բյուշից բյուշ ու հարկից հարկ,  
Առաջնորդեց ու տարավ:

Առաջնորդն է, տես, կանգնած,  
Բեմի վրա բարձր ու բարձր,  
Ո, ինչ ծափ է, օ, ինչ ծափ,  
Ինչ վորոտ է, ինչ տարափ...

Շառաչում ե պատից պատ  
Հեքյաթական մի պալատ,  
Ասոն յե՞րբ ե տեսել շատ,  
Այսքան ծափեր, այսքան թափ:

Ո, ինչ հրճվանք, յերբ կյանքում  
Հովիվներն են ծափ զարկում,  
Ձկն, չկն, վոչ մի խինդ,  
Նման հրճվանք աշխարհում:

155

Յերբ հրճվանքից արբեցած  
Ծառս ե լինում գյուղացին,  
Վոր ծափ դարկի, տեսնի իր  
Առաջնորդին ու մեծին:

Յեզ մատներին բարձրացած  
Ծափ ե տալիս Ասոն մեր,  
Ամեն ծափին ուղղում ե  
Բարձրանա դե՛ռ, յե՛նի վեր...

Ո, վճիռ, ո, վճիռ գյուղացին,  
Վոր հովիթն ե ցրտատար,  
Մուտք ե դործել պալատներ,  
Ապարանքներ սյունաշար:

Բարձրացել ե այսքան վեր,  
Մինչև մարմար դահլիճներ,  
Քարայրներից իր անդուռ,  
Խրճիթներից իր ավեր:

Դուրս ե դալիս Ասոն մեր,  
Դռներն են դել շառաշում,  
Վիթխարի յեն, բայց իսկույն  
Յեռ են դնում ու բացվում:

Յեռ են դնում ու փակվում,  
Նորից հրիբ, կբացվի,  
Գնա Ասո, մյ այնտեղ  
Մասն աղբյուր կա, լվացվիր:

Պալատի մեջ ի՛նչ աղբյուր,  
Ջորն հերիք եր գյուղացուն.  
Հիմի, տեսեք, կրեմլում  
Ասատուրն ե լվացվում:

Լվացվում ե, յետ գալիս,  
Տերն ե կարծես աշխարհի.  
Կարծես իսկի չի նստել  
Գայլասարի ժեռ բարին:

Ծոցատետրն ե դուրս բաշում.  
ՇԱմեն բակից, գյուղում մեր,  
Պետք ե դուրս գա մի նախիր,  
Կովե՛ք, կովե՛ք վոչխարնե՛ք:

Գյուղից մինչև ջրաղաց,  
Ջրաղացից Գայլասար,  
Գայլասարից մինչև Վանք,  
Ամպերի հետ հավասար,

Պետք ե լինի ընդարձակ  
Մի ամբակուռ կողլեկտիվ,  
Յեզ գնում ե Ասոն լուռ  
Կրեմլի մեջ թվից թիվ:

Ո՞վ պիտ կթի այսքան կաթ,  
Ո՞վ պիտ կըի տկերով,  
Յեզ անցնում են աչքի դեմ  
Խումբ խումբ հարսներ բակերով:

Ի՛նչ ապագա յերջանի՛կ,  
Ի՛նչ լիությունն, ո, ի՛նչ յե՛րգ,  
Ափսո՛ս, ափսո՛ս վոր Պաշոն,  
Ջուրկ ե թեից, չունի ձեռք:

Թե չե նա յել կիթեր...  
Սթափվում ե Ասոն վեր,  
Շուրջը հովիվ ընկերներ,  
Շուրջը ծափե՛ք ու ծափե՛ք:

Հովիթներ են բեմ դալիս,  
Հովիթներ են ծափ տալիս,  
Հովիթներ են ճառ ասում,  
Կարծես լինի յերազում:

Յե՛կ հրեմլի դահլիճում  
Ասոն ձայն է պահանջում.  
Ասոն կանգնում է բեմում,  
Խաղ է ասում հրեմլում:

«Բյուզիբը մնացին մեզ, սարահները մնացին մեզ,  
Վրանները մնացին մեզ,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես:

«Արանները մնացին մեզ, մառանները մնացին մեզ,  
Աղբյուրները մնացին մեզ,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես:

Թաղերը մնացին մեզ, մաղերը մնացին մեզ,  
Շաղերը մնացին մեզ,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես:

«Արտերը մնացին մեզ, վարդերը մնացին մեզ,  
Զարդերը մնացին մեզ,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես:

«Հովիվ Ասոն եմ յես, յեկել կանչում եմ քեզ,  
Յեկել յերգում եմ, տես,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես:

«Ամպերը մնացին մեզ, թամբերը մնացին մեզ,  
Լամպերը մնացին մեզ,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես:

«Հովիվ ու նախրապան մուժ գյուղերից յեկան  
Բյուզի ու սարահ մտան,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես:

«Զմզմ աղաներն անցան, վուշի ու մոխիր դարձան,  
Գյուղերը մեր հովացան,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես:

«Բաղերը մնացին մեզ, բաղերը մնացին մեզ,  
Խաղերը մնացին մեզ,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես:

«Լասերը մնացին մեզ, հասերը մնացին մեզ,  
Թասերը մնացին մեզ,  
Զիավոր, Զիավոր ո՞ւր ես...»

2

Հովիվ Ասոն ցնծալից  
Դուրս է դալիս հրեմլից.  
ՊատիՖոն է գյուղ տանում,  
Մի ժամացույց դրպանում:

Կրծքին խփած մի նշան,  
Հերոսության է փառքի.  
Զիավորն է — յերազն իր—  
Փրկարարը աշխարհքի:

Աքլոր ուներ անփետուր,  
Ուներ միայն մի կաղ ուր,  
Գյուղ է տանում ժամացույց  
Յե՛կ հաղարան մի բլրուր:

Յե՛կ քայլում է, քայլում նա,  
Կարծես լինի մի բանակ,  
Ասոն չունի ժամանակ,  
Շտապում է տուն գնա...»

Մոսկվան է, և ուղիղ  
Նա մտնում է գետնուղին.

Մանդուխքներ են շարժական,  
կանգ և առնում նախագան

կանգ և առնում, մտածում.  
— Ե՛յ, խղճուկ միտք գյուղացու,  
Ինչներ, ինչներ մենք տեսանք,  
Ի՞նչ որերի մենք հասանք...

Ինչ հեքյաթում պատմեցինք,  
Ինչ յերազում լսեցինք,  
Տեսնում ենք ջուխտ աչքերով,  
Յեվ դիպչում ենք վոտքերով:

Մոսկվայից գյուղը շին,  
Գայլասարը մինչև են,  
Բարձրանում և աչքի դեմ  
Մի ծիածան վոսկեղեն:

Միտք և անում նախագան.  
Մանդուխքներ են շարժական,  
— Աշխարհ, աշխարհ ճւր հասա,  
Ո՞ւր մնացիր Գայլասար...

## Վ Ե Ր Զ Ե Ր Կ

**Ս**յուպես, չոքած տարիներին քարայրին,  
ձամբորդի պես դեռ կատարը չհասած —  
Յեվ գլխարկիտ, և՛ ձեռքերին տարածված,  
Ձեզ եմ կանչում Սանասար ու Բաղասար:

Դուք չեք ապրում, չե՛, չեք ապրում, դուք չկա՛ք,  
Գայլասարում, Գայլասարում մնացիք,  
Ձեզ իմ յերգի արձագանքը կանչեց վեր,  
Սուլում եմ յես, ո՛, գնացե՛ք, գնացե՛ք...

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

# ԲԱՆԱՍՏԵՂԹԻ ՅԵՐԳԸ

## THE POET'S SONG

(Աւֆրեդ Թենիսոնից)

**Ա**նձրեն անցած եր. բանաստեղծն յեկավ,  
Դուրս յեկավ, դնաց քաղաքից հեռու.  
Մեղմ մի գեփյուռ եր փչում արևից,  
Մտվերներն ընկան ցորնի արտերում...

Նստեց նա մենակ վայրում մի անդորր,  
Յեվ մի մեղեդի յերգեց բերկրալի՝  
Վայրի կարապը կանգնեց ամպի մեջ,  
Յեվ արտուտն ընկավ նրա վտտքերին:

Ծիծառը կանգնեց միջատ վորսալիս,  
Ոձը ցած սահեց ծառածյուղքի տակ.  
Բազեն կանգ առավ՝ կտուցը գետնին,  
Ճանկերը պահած իր վորսի վրա:

Յեվ սոխակն առաց.—յերգեր եմ յերգել,  
Բայց և վնչ մի յերգ այսքան սրտաթով.  
Զի նա յերգում է թե ինչ կլինի կյանքը  
Տարիներ, տարիներ, տարիներ հետո...

ՍԵՐ ՅԵՎ ՄԱՀ  
LOVE AND DEATH

(Ալֆրեդ Թենիսոնից)

Հորը լուսինը վեր բարձրանալիս,  
Սերը ներս մտավ այգին դրախտի.  
Շողուն աչքերը շուռ տվեց չորս դին.  
Կասիան շուռ գալիս, տեսավ մեն մենակ  
Մահը շրջում էր կարմրածառի տակ,  
Ինքն իրեն խոսում, գնում ու գալիս.  
— Չքվիր այստեղից, այս քայլերն իմն են.  
Վորոտաց մահը, սերն արտառվալից  
Պարզեց շողշողուն թևերն իր վերև.  
Թռչելիս առաց. — այս ժամը քոնն է,  
Սովեր դու կյանքի, ինչպես ամեն ծառ  
Լույսի տակ կանգնած շուրջը շուք ունի,  
Մյնպես ել լույսում մեծ հավերժության,  
Ամեն կյանք ունի սովերը մահի.  
Գանցնի նա ամեն ընկնող ծառի հետ,  
Իսկ յես ամենուր իշխում եմ հավետ

ՊԱՏՇԳԱՄԲԻ ՏԱԿ  
UNDER THE BALCONY

(Ոսկար Ուայլդից)

Ո', դու, պայծառ աստղ, մուխ կարմիր բերանով,  
Ո, վոսկյա հոնքերով լուսին,  
Հոտավետ հարավից վեր բարձրանալով,  
Լնւյս տվեք սիրուհուս թող գա,

Չկորցնի թող նա իր ճամբան,  
Հողմահար սարերի ուսին.  
Ո', դու, պայծառ աստղ, մուխ կարմիր բերանով,  
Ո, վոսկյա հոնքերով լուսին:

Ո', նսվ, վոր ճոճվում ես ծովում մենավոր,  
Ո, սպիտակ առադաստանավ,  
Բեր նրան, բեր նրան, սիրուս հեռավոր,  
Յես ու նա ուզում ենք այն շող,

Կապտավուն հովտում այն ծաղկող  
Նարգիզների աշխարհը գնալ.  
Ո, նսվ, վոր ճոճվում ես ծովում մենավոր,  
Ո, սպիտակ առադաստանավ:

Ո', զվարթ թռչուն դու, քաղցրաձայն յերգիչ,  
Ո', հյուղքին յերգող դու թռչուն,

Յերգերդ թափիր դու քո թուխ կոկորդից,  
Յե՛վ թող սիրունիս իմ գարթնի,

Գլուխը բարձից բարձրացնի,  
Յե՛վ դեռի ինձ գա նա անքուն.  
Ո՛, դվարթ թռչուն դու, քաղցրաձայն յերգիչ,  
Ո՛, ձյուղքին յերգող դու թռչուն:

Ո՛, ծաղիկ կախված դու դողացող ողում,  
Ո, ձյունյա շուրթերով ծաղիկ,  
Մտտ արել, սիրունիս քեզ ե կարոտում,  
Յե՛կ նրա գլխարկը զարդարելը,

Ազեստի մի ծալքում թառամիր,  
Կոացիք, վոր նա քեզ քաղի.  
Ո՛, ծաղիկ, կախված դու դողացող ողում,  
Ո՛, ձյունյա շուրթերով ծաղիկ:

## ՄԻՐՏՍ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄՆ Ե

### MY HEART'S IN THE HIGHLANDS

(Ռոքերտ Ռոքուզից)

**Ս**իրտս Բարձունքներումս ե, սիրտս այստեղ չի՞  
Սիրտս Բարձունքներումս ե, լեռների միջին.  
Յեղնիկների հետքով անվերջ վազում ե նա,  
Սիրտս Բարձունքներումս ե, ուր ել յես գնամ:

Մնաք բարձի լեռներ, դուք ձյունածածկ ու վեհ,  
Մնաք բարձի կիրճեր և կանաչկոխ ձորեր,  
Յե՛վ անտառներ մթին, և վայրակախ թփեր,  
Մնաք բարձի ուղիներ և բարձրագոչ ջրեր:

Մնաս բարձի Բարձունքներ, մնաս բարձի ձյուտիս,  
Մնադավայր դու իմ վեհ, խիզախության, լույսի,  
Ուր ել թափառեմ յես և դեզերեմ անձիք,  
Բարձունքների աշխարհը հավետ սիրեցի:

Սիրտս Բարձունքներումս ե, սիրտս այստեղ չի՞,  
Սիրտս Բարձունքներումս ե, լեռների միջին,  
Յեղնիկների հետքով անվերջ վազում ե նա,  
Սիրտս Բարձունքներումս ե, ուր ել յես գնամ:

# ՄԻՐՈ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

## LOVE'S PHILOSOPHY

(Պոստի Պիշ Շեւեհո)

Աղբյուրները կապվում են գետին,  
Գետերն են ձգտում գեպի ծով,  
Ամենուրեք իրար են խառնվում  
Հողմերը քաղցր հուզմունքով:

Չի մտում վոչ մի բան առանձին.  
Աշխարհում՝ վսեմ մի որենք,—  
Փարվում է միշտ մեկը մյուսին,  
Ինչո՞ւ մենք իրար չփարվենք:

Տե՛ս, լեռներն են յերկինքն համբուրում,  
Ալբերն են գրկվում խելագար,  
Ծաղկունքը բոբջ, յեղբոր պես  
Սիրում ու ներում են իրար:

Արեշոզն է փարվում հողին,  
Լուսնիշոզն է ծովը գուրգուրում.  
Այս բոլորը, սե՛ր, արժեք չունեն,  
Յեթե դու ինձ չես համբուրում:

# ՀԱՐՈՒՆ ԱԼ ՐԱՇԻԳԸ

## HAROUN AL RASCHID

(Հենրի Լոնկֆելտից)

Հարուն Ալ Րաշիդը մի որ նստած  
Կարդում էր մի գիրք. գրքում կար գրված.

«Արքաներն ուր են, ուր, ուր են նրանք,  
Վորոնք աշխարհը խժոնցին, կերան:

Նրանք գնացին, դու յի՛չ չես մտա,  
Այդ ճանապարհով ինքդ ել կգնաս:

Ի՞նչ, վոր աշխարհն ես քեզ բաժին ընտրում,  
Յե՛վ փերիները հրուն ու խնդուն:

Վերցրո՛ւ, այն ինչ վոր աշխարհը կտա,  
Իմացիր սակայն, մահը կա ու կա...»:

Ալ Րաշիդ Հարուն դուռն իր փեց,  
Յե՛վ գրքի վրա արցունքներ թափեց:



ԱՆՀԱՆԳԻՍՍ ՍԻՐՏԸ  
THE RESTLESS HEART

(Բանաստեղծական աֆորիզմ)

Զբաղացքարն ու մարդու սիրտը  
Զե՛ն մտում յերբեք խաղաղ,  
Յերբ վոչինչ չունեն աղալու,  
Սկսում են իրենց աղալ...

ELDORADO

(Նոգար Ելան Գոյից)

Զվարթ ու խենթ  
Մի բաջ առպետ,  
Գիշեր ցերեկ յուանդով  
Թափառելով,  
Յերբ յերգելով  
Փնտրում եր Ելզորադոն՝  
Ու դարձավ ծեր,  
Առպետն այս վեր,  
Սրտին իջավ մահադող,  
Յերբ, վոր արար  
Յերկրի վրա  
Զգտավ Ելզորադոն՝  
Յերբ ուժասպառ  
Դարձավ խալառ,  
Ստվեր տեղավ թափառող-  
«Ստվեր, առաց,  
Ո՛ւր ե, առա,  
Յերկիրն այդ՝ Ելզորադոն՝»  
«Լուսնի հետու  
Են լեռներում,  
Ստվերի Հովտում անդորր,  
Փնտրիր, ով բաջ,  
Ստվերն առաց,  
Այնտեղ ե Ելզորադոն՝»

ՊՈԵՏՆ ՈՒ ԹՈՉՈՒՆԸ  
THE POET AND THE BIRD

(Ծլիզարեթ Բրաունինկից)

Պոետին ժողովուրդն առաց. —  
հեռացիր, գնա մեզանից,  
Յերբ յերկրի մասին ենք խորհում,  
դու անվերջ յերկիրը թողած  
Յերկնային տաղեր ես յերգում,  
շատ լավ ե յերգում քեզանից  
Այնտեղ՝ վեր, գավիթին նստած  
մի փոքրիկ թխազույն սոխակ:  
Պոետը դուրս գնաց լացով,  
սոխակը դատարեց յերգել.  
Շե, այժմ, քաղցրաձայն սոխակ  
այդ ինչնու թո յերգը հանգավ՝  
— Չեմ կարող երկրի մասին յեռ  
բանաստեղծից ել լավ յերգել,  
Ամեն մի հնչյունում նրա  
միշտ հողն ու յերկիրը միշտ կա:  
Պոետը դուրս գնաց լացով  
և մեռավ հեռվում մոռացված,  
Սոխակը թռավ ու մեռավ  
շերիմին նրա վողբազին.  
Յերգվում եմ, յերբ յես յեկա  
ինչ յերգ կար այնտեղ մնացած,  
Բանաստեղծի յերգերն եյին  
և վնչ թե փոքրիկ սոխակի:

ՄԻՐՈՒՄ ԵՄ ՔԵՉ

I LOVE YOU

(Փոմաս Հուդից)

Միրում եմ քեզ, սիրում եմ քեզ,  
Քեզնից բացի և վոչ վոքի.  
Դու տեսիլն ես իմ գիշերի,  
Իմ յերազն ես ցերեկային:

Մրտիս վսեմ դու արձագանք,  
Դու որհնուլթյունն իմ աղոթքի,  
Միրում եմ քեզ, սիրում եմ քեզ,  
Քեզնից բացի և վոչ վոքի:

Միրում եմ քեզ, սիրում եմ քեզ,  
Այդ բանն և միշտ ու միշտ հնչում,  
Ու իմ հպարտ տողերիս մեջ  
Այդ չափն և միշտ ու միշտ իջնում:

Դու վճիռն ես իմ աչքերի  
Ջահելությանս և խինդիս մեջ,  
Միրում եմ քեզ, սիրում եմ քեզ  
Հազարավոր աղջկանց մեջ:

ՅԵՐԲ ՅԵՐԿՈՒ ՍՐՏԵՐ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ

(Հայնրիխ Հայնեյխց)

**Յ**երբ յերկու սրտեր բաժանվում են,  
Թողում են, վորպէս բարեկամ,  
Գրկում են ձեռքերն, արտասվում են,  
Հառաչում, ցավում են յերկար:

Բաժանվելիս յերբեք չլացինք,  
Վողբացինք վոչ ել մենք յերկար,  
Արցունքը, հառաչն ու կարոտը  
Բաժանումից հետո յեկան...

ԱՍՈՒՄ ԵՆ ՅԵՐԳԵՐՍ ԹՈՒՆՈՏ ԵՆ

(Հայնրիխ Հայնեյխց)

**Ա**սում են յերգերս թունոտ են,  
Ո, սեր իմ, ել ինչպէս լիներ,  
Մահացու, կախարչիչ հմայքով  
Դու իմ մեջ թափեցիր թույներ:

Ասում են յերգերս թունոտ են,  
Կարո՞ղ եր ուրիշ կերպ լինել:  
Թունավոր ոձեր կան իմ մեջ,  
Նրանց մեջ և դու կաս, — իմ սեր:

## Ո՛, ԳԵՂԵՑԻԿ ԶԿՆՈՐՍ ԱՂԶԻԿ

(Հայնրին Հայնեյեց)

**Ո**, գեղեցիկ ձկնորս աղջիկ,  
Յե՛կ, մոտեցիր նավով ափին,  
Նստենք այստեղ, ձեռք ձեռքի տանք  
Յեվ փսփսանք մենք ծովափին:

Հանգստացիր կրծքիս վրա,  
Յեվ մի վախիւր բոլորովին,  
Զե՛ վոր անվախ դու ամեն ոք  
Անձնատուր ես լինում ծովին:

Միրտս ել նման ե ովկյանի,  
Մակրնթացող ու փոթորկուն,  
Յեվ մարգարտյա բազում զանձեր  
Շողջողում են նրա խորքում...

## ԱՍՏ՛, ՈՒՐ Ե ԱՂԶԻԿՆ ԱՅՆ ՇՈՂ

(Հայնրին Հայնեյեց)

**Ա**ստ, ո՞ւր ե աղջիկն այն շող,  
Վորին մի որ յերգեցեր դու,  
Յեվ բոցերն այդ հզոր սիրո,  
Այրեցին քո սիրտն ու լեզուն:

«Ահ, բոցերն այն վաղուց մարել,  
Ցուրտ ու մուժ ե սրտում սիրող,  
Յեվ այս զերբը մի սափոր ե  
Լցված սիրո մոխիրներով...»

## Ո՛, ԳԵՂԵՑԻԿ ԶԿՆՈՐՍ ԱՂՋԻԿ

(Հայնրին Հայնեյեց)

**Ո**, գեղեցիկ ձկնորս աղջիկ,  
Յե՛կ, մոտեցիւր նալով ափին,  
Նստենք այստեղ, ձեռք ձեռքի տանք  
Յեկ փսփսանք մենք ծովափին:

Հանգստացիւր կրծքիս վրա,  
Յեկ մի վախիւր բոլորովին,  
Զե՛ վոր անվախ դու ամեն որ  
Անձնատուր ես լինում ծովին:

Սիրտս ել նման է ովկյանի,  
Մակընթացող ու փոթորկուն,  
Յեկ մարգարտյա բազում դանձեր  
Շողշողում են նրա խորքում...

## ԱՍԱ՛, ՈՒՐ Ե ԱՂՋԻԿՆ ԱՅՆ ՇՈՂ

(Հայնրին Հայնեյեց)

**Ա**սան, ո՞ւր է աղջիկն այն շող,  
Վորին մի որ յերգեցիւր դու,  
Յեկ բոցերն այդ հզոր սիրո,  
Այրեցին քո սիրտն ու լեզուն:

«Ահ, բոցերն այն վաղուց մարել,  
Ցուրտ ու մուխ է սրտում սիրող,  
Յեկ այս գիրքը մի սափոր է  
Լցված սիրո մոխիրներով...»

## EPIGRAM

(Հորդ Բայրոնից)

**Ա**շխարհը մի խուրձ խոտ է,  
Իսկ մարդիկ միայն եղեր,  
Քաշում են այս ու այն կողմ,  
Ջոն Բուլն\* և մե՛ծ եղը...

\* Փոխաբերական մտքով ակնարկված է Անդլիան:

## ՓԱԹԵՐԼՈՅԻ ՆԱԽԱՏՈՆԱՆՔԸ

(«Չայլո Հարոլդ»-ից)

## THE EVE OF WATERLOO

(Հորդ Բայրոնից)

XXI

**Խ**րախճանք կար գիշերով. պարում էյին.  
Բելգիայի մայրաքաղաքը խմբել էր  
Բոլոր ասպետներին ու սիրուհիներին.  
Դանլիճում շողշողում են լամպերը,  
Հազարավոր սրտեր բաղխում են ուրախ.  
Յերբ նվագը հորդեց հեշտազրգիտ, հրակ,  
Հայացքները արբած գիպան իրար.  
Հարսանեկական զանգ է ամեն մի կյանք,  
Բայց սճւս, հնչում է մի ձայն գերթ մահագանգ:

XXII

Չլսեցի՞ք արդյոք. վնչ, քամին եր դա,  
Կամ Ֆուրգոն, վոր անցավ քարոտ փողոցով.  
Պարենք մինչև լույս. վոչ մի բուն ու դադար,  
Յերբ ջահելութունն ու հաճույքն են բոցոտ,  
Հալածենք վտաբերով ժամը շողացող.  
Բայց սուս, այդ ձայնը խոր, նորից ներս ընկավ,  
Ավելի վորոշ, ուժգին ու անալի,  
Ամպերն էլ, կարծես, արձագանք են տալիս.  
Իդեն, թնդանոթի վորոտն է գալիս...

## XXIII

Դեռ ու դեռ են վազում ամենքն ել շփոթված,  
 Կան հառաչներ խեղդուկ, արցունքներ անզին,  
 Այտեր կան գունատ, վորոնք մի ժամ առաջ  
 Շառագունել էին սիրո գովասանքից,  
 Բաժանումներ տխուր ու հանկարծակի.  
 Ո՞վ իմանա, նորից, կհանդիպե՞ն կյանքում  
 Այդ աչքերը սիրող, հայացքները հրակո  
 Յերը գիշերին այդ քաղցր, հեշտագին ու անքուն.  
 Մի այդպիսի տխուր լուսայգ եր չորում:

## XXV

Նժույզներ են թամբում, հաղշտապ, արագ,  
 Ֆուրգոններ են անցնում, հեծելախմբեր,  
 Յեկ դուրս են թափվում ու խուժում են վարար,  
 Զորաշարվում են ու կազմում են խմբեր,  
 Իսկ թնդանոթը խուլ, վորոտում է դեռ.  
 Կողքին, շեփորը, վաղ, լուսաստղից առաջ  
 Բոլոր զորքերին արթնացրել է քնից.  
 Քաղաքացիք շփոթ շշնջում են, լալիս  
 — Թշնամին գալիս ե՛, գալիս ե՛, գալիս...

## XXVII

Վերից Արդենի տերևները շափշաղ,  
 Բնության արցունքով — ցողով ծածկված,  
 Վողբում են անցնող այդ քաջերին, ավանդ,  
 Վորոնք կհնձվեն, դեռ յերեկոն չիջած,  
 Նման այն խոտի, վորն այժմ պառկած  
 Նրանց վոտքի տակ, հաջորդ գարունքին  
 Նքանց վրա, ավանդ, պիտի բարձրանա,  
 Յերը այդ կենդանի դանդավածն հուսավառ  
 Թավալվի առաջ և հար հանգստանա...

## XXVIII

Յերեկ կեսուր լցվեցին խենդի բոցով,  
 Սութին, բերկրանքի պտույտի մեջ մտան,

Կես գիշերը բերեց աղղանշան խոցող,  
 Լուսայգը ազդյեթ, ուրախության դադար,  
 Յերեկը կռիվ՝ խորն ու արնաթաթավ,  
 Վորոտացող ամպեր, վորոնք, յերը անցան,  
 Հողը կավյա մի այլ խիտ շերտով եր ծածկված,  
 Թե ձիավոր, թե ձի, ընկեր ու թշնամի  
 Բոլորն ել խոնված մի դամբանում կարմիր...

ՇԱՊԿԻ ՅԵՐԳԸ  
THE SONG OF THE SHIRT

(Թուման Հուդից)

Մատներով բարակ ու մաշված,  
Կոպերում ուռուցք, արյուն,  
Մի խեղճ կին ցնցոտիք հագած  
Անվերջ շապիկ եր կարում:

Կարում, կարում ու կարում եր,  
Թըշվառ ու քաղցած մի կին,  
Յեվ տխուր ձայնով յերգում եր  
Տխրագին յերգը շապիկ:

Կարել ու կարել ու կարել,  
Մինչ աքաղաղը կանչի,  
Կարել ու կարել ու կարել  
Մինչև աստղալուսն իջնի:

Կարել ու կարել, մինչև վոր  
Գլուխս պտտվի, հակվի,  
Կարել ու կարել, մինչև վոր  
Աչքերս մթնին, փակվին:

Ոձիք ու թևեր հար կարել,  
Շարել կոճակներ բազում,

Մինչ հոգնած ընկնեմ յես կարես,  
Նորից կարեմ յերագում:

Ո՛ր, մարդիկ, վոր քույրեր ունեք,  
Վոր ունեք դուք մայր ու կին,  
Կտավ չե, ինչ վոր հագնում եք,  
Կյանք ե, կյանք ե ձեր հագին:

Կարե՛լ ու կարե՛լ ու կարե՛լ,  
Թըշվառ, անոթի, տնանկ,  
Յերկտակված թեղով միշտ կարել  
Մի շապիկ, ո, վճճ՝ պատանք:

Բայց ինչո՞ւ խոսեմ յես մահից,  
Մահը՝ վոսկրոտ Ուրվական,  
Յեվ ինչո՞ւ սարսել նրանից,  
Նրան եմ չե, վոր նման:

Նրան եմ, չե, վոր յես նման  
Ծովի որերին դաժան,  
Յերկի՛նք, ինչո՞ւ յե հացը թանգ,  
Արյունն ու միտն իմ եժան...

Կարե՛լ ու կարե՛լ միշտ նստած,  
Ձկա վերջ յերբեք գործիս,  
Վաստակս ինչ ե — քիչ չոր հաց,  
Հարդյա ներքնակ, ցնցոտիք:

Ճոճվող առատտաղ ու հատակ,  
Կոտրած սեղան, մի աթոռ,  
Մերկ պատեր, ուր, դո՛հ եմ, հաճախ  
Սովերս ե խաղում դողդող:

Կարե՛լ ու կարե՛լ միշտ անքուն,  
Ծեղից մինչև իրիկուն,

Ինչպես բանտարկյալն ե բանտում  
Մեղքի համար աշխատում:

Կարել թե, ոճիք ու թեզան,  
Կարե՛լ ու կարոտել քնի,  
Մինչ հոգնած ձեռքերիս նման  
Իմ սիրտն ել, սիրտն ել հոգնի:

Կարե՛լ, ու կարե՛լ ու կարե՛լ  
Դեկտեմբեր ցրտին, ձմռան,  
Կարե՛լ ու կարե՛լ ու կարե՛լ  
Որեքը մինչև տաքանան:

Ծիծեռները բներ հյուսեն  
Ծածկիս շուրջը ճախրելով,  
Ինձ դարնան լույսերով հուզեն,  
Շող լանջքերը ցույց տալով:

Ո՛ր, վորքան կուզեյի մի պահ  
Շնչել բուրմունքը ծաղկանց,  
Յեվ կանաչ զգալ վտաբիս տակ,  
Գլխիս կապուտակ ու բաց:

Վորքան կուզեյի գեթ մի ժամ,  
Անցած որերս զգալ,  
Յերբ հոգսն այս, զբկանքը դաժան,  
Այրող այս վիշաբ չկար:

Մի ժամ, մի ժամ ո, միտն,  
Կուզեյի քիչ շունչ առնել,  
Վոչ սիրո կամ հույսի համար,  
Միայն, միայն արտասովել:

Խաղաղվեր, ախ, սիրտս, դուցե...  
Բայց դասն արցունքներ մարեք,

Միք թափվի անդիս, կարիս,  
Թողեք կարե՛մ ու կարե՛մ...:

Մատներով բարակ ու մաշված,  
Կոպերում ուռուցք, արյուն,  
Մի խեղճ կին ցնցոտիք հագած  
Անվերջ շապիկ եր կարում:

Կարում, կարում ու կարում եր,  
Թըշվառ ու քաղցած մի կին,  
Յեվ տխուր ձայնով յերգում եր  
Տխրագին յերգը շապիկ:

Ո՛ր, յերգն այդ գեթ, թե կհասնե՛ր  
Հարուստ մարդկանց ախանջին...

## SONG TO THE MEN OF ENGLAND

(Պերսի Պիշ Շելլիոյ)

**Ս**նդ լիացիք, ի՞նչ եք հարուստ  
Ծուլ լորդերի համար վարում,  
Ի՞նչ եք հյուսում պերճ ու վառվառ  
Պատմուճաններ նրանց համար:

Որոտցից մինչև դագաղ,  
Ի՞նչ եք պահում, սնում ազահ  
Այդ ապերախ բոռերին գեր,  
Վոր ծծում են արյունը ձեր:

Անգլիայի ժիր Մեղուներ,  
Ինչո՞ւ յեք դուք կռում զհնքեր,  
Յերբ անկնճիթ բոռերն անկուշտ  
Ձեր զհնքերն են հափշտակում:

Ունեք անդորր, մխիթարանք,  
Մնունդ ու սեր, պատասպարան,  
Յեկ ի՞նչ եք դուք գնում սիրով  
Ձեր վշտերով ու հոգսերով:

Դուք եք ցանում, նրանք՝ հնձում,  
Նրանք են ձեր բերբը ծծում,  
Հագնում ձեր պերճ հյուսվածքները,  
Կրում կռած ձեր զհնքերը:

Յանեք, բայց միք թողնի հնձեն,  
Ձեր վաստակն ու բերբը ծծեն,  
Հյուսեք, բայց մի՛ք տա ծուլերին,  
Տեր կանգնեցեք ձեր զհնքերին:

Դուք աղրում եք խցիկներում,  
Նրանք մարմար դահլիճներում,  
Ի՞նչ եք ցնցում շլթայք շողուն,  
Յերբ պողպատն է ձեզ վրա շողում:

Դադդահներով, քլունգով, բահով,  
Ձեզ դամբան եք շինում մահով,  
Պատանք հյուսում, մինչ անմահն  
Անգլիան դառնա ձեզ գերեզման:

## Մ Տ Ր ՈՒ Կ Ի Յ Ե Ր Ա Ջ Ը

### THE SLAVE'S DREAM

(Հենրի Լոնկֆելլոյից)

**Մ**անգաղն իր ձեռքում, նա դեռ անհավաք  
Բրնձի կողքին եր ընկած,  
Պարած մաղերն իր ավաղների տակ,  
Փռված եր արտում կրճքաբաց,  
Յերբ կրկին քնի մշուշի մեջ իր  
Ծննդավայրը տեսավ հանկարծ:

Իր յերազների լայն տեսարանով  
Նիգերը հոսեց տիրաբար,  
Տափարակի մեջ, արմավենքի տակ  
Նա քայլեց այնպես վեհաբար,  
Լսեց զողանջը քարավանների  
Սարերից ընկած ճանապարհ:

Յեվ կրկին տեսավ նա իր սեւայտ  
Քաղուհուն մանկանց մեջ կանգնած,  
Նրանք կախ յեղան, վեղն իր գրկեցին,  
Համբուլքով փարվեցին նրան,  
Մի արցունք ցայտեց ստրուկի աչքից  
Յեվ ընկավ ավազի վրա:

Իսկ հետո թափով ձիարշավեց նա  
Նիգերի ծանոթ ավերով,

Մանձերն իր վոսկյա շղթաներ էյին,  
Յեվ ազմի հզոր շաչյունով,  
Ամեն ցատկումին ձիու կողքին  
Պատյանն եր հարվածում թափով:

Իր դեմից, վորպես արնոտ դրոշներ  
Հրահավերը խմբով թռան,  
Մինչև յերեկո նա տափարակում  
Հետեց թռիչքին նրանց,  
Մինչ տանիքները Գաֆրի հյուղերի  
Յեվ ծովը բացվեց իր առաջ:

Մուլթին՝ առյուծի մունչյուն լսեց,  
Բորենու ճիչերը տանջող,  
Իսկ յերբ նա ճգմեց յեղեգները խիտ  
Գետաձին խուժեց թռիչքով,  
Վորն անցավ, վորպես թմրուկի թնդյուն  
Յերազի ցնծության միջով:

Անտառներն իրենց բյուր լեզուներով  
Ցնծաղին կանչեցին նրան,  
Յեվ Անապատի սուր Հողմը սուրեց  
Ձայներով վայրի և ուրախ,  
Ստրուկը ցնցվեց, ժպտաց քնում այդ  
Ալիկոծ հրճվանքի վրա:

Նա չղգաց տիրոջ մտրակի դարկը,  
Վոչ որվա շունչը հրաշող,  
Մահը լույս եր Բնի Աշխարհը,  
Փռված եր մարմին մի անդող,  
Մաշված մի կապանք, վորին իր հողին  
Խորտակել, նետել եր մի կողմ:

**ԻՍՊԱՆՍԿԱՆ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ  
ՅԵՐԳԵՐԻՑ**

\* \* \*

**Հ**երս — նա մի նավաստի յեր,  
Ախպերս ել եր նավաստի,  
Ով ել լինի սիրած տղես  
Նավաստի պիտի լինի:

\* \* \*

Սիրահարս պուճուր մարդ ե,  
Ինձ պուճուրն ել տաղ կգա,  
Պատիկ ծառի վրա յել շատ՝  
Պտուղ ու քիչ տերեւ կատ:

\* \* \*

Մարգարիտը թանգագին ե,  
Աղամանդը՝ թանգ ե շատ,  
Ուսանողի մի համբույրը՝  
Աղամանդից աղամանդ:

\* \* \*

Ծովը լիներ թանաքաման,  
Ողջ = Սաղ յերկինքն ել թուղթ լիներ,  
Կնոջ միջի շարությունը  
Գրելով ել վերջ չուներ:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

68

Անցնում եյի յես լեռներով . . . . . 5

**Ի Մ ՌՈՒԲԱՅԱԹՂ**

Ամեն մեկը ուրույն մի աշխարհ . . . . .	9
Մանկությունս չանցավ կապույտ . . . . .	11
Մայր իմ, ով ես յեղել դու . . . . .	11
Ինձ արթնացրին թնդանոթով . . . . .	12
Ուր ավազ կար, ուր արե կար . . . . .	12
Մանկատունը դարձավ ավաղ . . . . .	13
Մեր մանկատան կառավարիչ . . . . .	13
Ընկա մենակ մեր մանկատան . . . . .	14
Յնքը կփակեք մանկատունը . . . . .	14
Աղջիկ եյիք դու լուսեղեն . . . . .	15
Ձեռնարկ դարձար դու իմ սիրուս . . . . .	15
Յես քեզ տեսա իմ գնացած . . . . .	16
Հսկիք հիմա և թող անցնեն . . . . .	16
Ո՛վ կարող ե չափել սերը . . . . .	17
Յես խոստացա քեզ պալատներ . . . . .	17
Մի անըջիք լուսնի մասին . . . . .	18
Չկա վոչինչ մեր այս մարմար . . . . .	18
Ունեցա յես ուսուցիչներ . . . . .	19
Ամեն մեկը, ով վոր յեկավ . . . . .	19
Ճամբորդի պես յեղար անքուն . . . . .	20
Վոչ դուս կա ինձ և վոչ տանիք . . . . .	20
Արեգակը թանաքաման . . . . .	21
Իմ ներքնակը լցրել եմ յես . . . . .	21
Հայր իմ, հայր իմ, ինչո՞ւ տարար . . . . .	22
Չեմ մոտեցրել շուրթերս յես . . . . .	22
Ծնվեցի Յեփրատի ափին . . . . .	23
Յերևան, քեզ չեմ մոռանա . . . . .	23
Դու չապրեցիր Հոտմուժ . . . . .	24
Աչքերը վոսկյա խուփեր են . . . . .	24
Կանոց առեք դժնի արցունքներ . . . . .	25

Կրակն այս, վոր յես անդադար . . . . .	25
Ո, կամաց վորոտա կրակ . . . . .	26
Ո, հողմեր, հողմեր դու Հյուսիս . . . . .	26
Ո, շողից, տենդից եմ այրվում . . . . .	27
Ինչպես Բյորնդը սիրեց մի որ . . . . .	27
Ո, Արարատ, դու մշտագո . . . . .	28
Ո, Արագած քառագագաթ . . . . .	28
Ուր ել քայլեմ, ուր ել գնամ . . . . .	29

**Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր**

Դիմում Հյուսիսին . . . . .	33
Մենք անվերջ կանչում ենք ապրել . . . . .	35
Ուսանողը . . . . .	38
Պարստահարի յերգը . . . . .	40
Անցագիրը . . . . .	44
Նոր որորոցի յերգ . . . . .	46
Ցերը փոքրիկ եյի . . . . .	48
Մտորում . . . . .	49
Հարեանիս աղջկա հետ . . . . .	50
Սրնդահար . . . . .	51
Հարզը գնում ե . . . . .	52
Վորքան ջինջ են շողում . . . . .	53
Ինչ աչքեր են . . . . .	54
Դուրս կգամ արդյոք . . . . .	55
Մանկությունը գիժ մի յերգ ե . . . . .	56
Անիկին և Ֆոլիկին . . . . .	57
Արբեցում . . . . .	58
Վորքան ես դու անփուլթ . . . . .	61
Այս քամանչան արևածայն . . . . .	62
Այստեղ ժայռեր կային . . . . .	63
Ցերդ լիության . . . . .	64
Սեանա լճին . . . . .	65
Ձոն առ Մաղկաձորի գրողների Հանգստյան տուն . . . . .	66
A Song of Mine . . . . .	68

**Պ Ո Ւ Մ Ն Ե Ր**

Ասեղապոս . . . . .	73
Քայլասար . . . . .	103

**Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր**

Բանաստեղծի յերգը . . . . .	163
Սեր և մահ . . . . .	164
Պատշամբի տակ . . . . .	165
Սիրտս Բարձունքներումս ե . . . . .	167
Մերո փիլիսոփայությունը . . . . .	168
Հարուն Ալ Բաշիզը . . . . .	169
Mother o' mine . . . . .	170
Մի յերգ Վոթորիկ-ից . . . . .	171
Անհանգիստ սիրտը . . . . .	172
Նլադարդո . . . . .	173
Պոետն ու թռչունը . . . . .	174
Սիրում եմ քեզ . . . . .	175
Ցերը յերկու սրտեր բաժանվում են . . . . .	176
Ասում են յերգերս թունոտ են . . . . .	177
Ո, գեղեցիկ ձկնորս աղջիկ . . . . .	178
Առն, ուր ե աղջիկն այն շող . . . . .	179
Epigram . . . . .	180
Ճաթերլոյի նախատոնանքը . . . . .	181
Շապկի յերգը . . . . .	184
Song To The Men of England . . . . .	188
Մտորակի յերգը . . . . .	190
Իսպանական ժողովրդական յերգերից . . . . .	192

**Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր**

Sպված ե	Պետք ե լինի
տղամանդ (եջ 65, տող 4)	աղամանդ
Քայլեր ինձ գյուղից դուրս (եջ 151, տող 9)	Քայլեր ինձ հետ գյուղից դուրս
Մութին (եջ 182, վերջին տող)	Մութին

Отв. ред. А. Адоян  
Тех. ред. М. Абгарян  
Художник Лекапе

Хачик Даштени

П Л А М Я

Московский сборник поэм и стихов

(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.  
Москва, Армянский пер., 2. Заказ № 650.  
Главлит № Б—20291. Тираж 2500. Сдано  
в набор 25/IV-36 г. Подп. к печати 15/VI-36 г.  
Печ. листов 12<sup>1</sup>/<sub>4</sub>. В 1 печ. л. 38400 п. зн.



ՀՀ Ազգային գրադարան



NL0339298

26945

9120 5 A.

